Ուշ միջնադարում, ի տարբերություն Հայաստանի կենտրոնական մարզերի, որոնք ընկել են Թուրքիայի և Իրանի տիրապետության տակ, Խաչենի մելիքները պահպանել են իրենց հարաբերական ինքնուրույնությունը («հայկական հինգ մելիքությունների» դարաշրջանում՝ Վարանդա, Խաչեն, Ռիզակ, Ջրաբերդ, Գյուլիստան), նրանք երկիրը դարձրել են հայ ազատագրական շարժման և ռուսական կողմնորոշման կենտրոն: Վավերագրական և այլ աղբյուրներից լավ հայտնի է մելիքների ակտիվությունը շահական Իրանի և սուլթանական Թուրքիայի դեմ հայերի պայքարի կազմակերպման գործում: Խաչենի (Ղարաբաղ) հետ են կապված Իսրայել Օրիի, Միսաս Վարդապետի, Հովսեփ Էմինի առաջնությունները՝ ուղղված ռուսական կողմնորոշման իրականացմանը, ինչպես նաև 18-րդ դարի հայ նշանավոր զորապետ Ռավիթ-բեկի զինված պայքարը:

Միայն 18-րդ դարի սկզբին Ղարաբաղի լեռնային մասի քաղաքական իրադրության վրա սկսեցին ազդեցություն ունենալ Միջին և Փոքր Ասիայից ու Բլոգիստանից տեղափոխված և դեռևս 16-րդ դարի սկզբին հարավից ստափաստանային շրջաններում բնակություն հաստատած ոչ հայկական էթնիկական զանգվածները:

Ծարաֆ-խան Բիթլիսիի (16-րդ դ.) վկայությամբ. «... ջսանջորս քըր դական ցեղեր են բնակվում Հայկական Ղարաբաղում և հայտնի են «իլիրմի դորդ» (թուրքերեն «ջսանջորս») ընդհանուր անվամբ»: Այդ քրդական ցեղերը, ինչպես և «օթուզ իքի» (թուրքերեն «երեսուներկու») ցեղախումբը գաղափարել էին Միլի տափաստանի շրջանը (Ղարաբաղյան ցածրավայրը): «Օթուզ-իքիի» կազմի մեջ էին մտնում նաև մանր թուրքական ցեղեր: Այդ խառնակույտի մեջ առանձնանում էր Ջևանշիր ցեղը, որի ղեկավարը համարվում էր ամբողջ «Օթուզ-իքիի» ղեկավարը: 1722թ. Ջևանշիր ցեղը հանդես եկավ Ռավիթ-բեկի գլխավորած հայերի ապստամբության դեմ և ջախջախվեց ապստամբների կողմից: Ավելի ուշ Նադիր շահը Ջևանշիր, Օթուզ-իքի ցեղերը վերաբնակեցրեց Իրանում՝ Խորասանի-Սարասյս վայրում, բայց Նադիրի մահից-հետո (1747թ.) նրանց հաջողվեց կրկին վերադառնալ Հարթավայրային Ղարաբաղ, որտեղ նրանց միացան Վրաստանից եկած դեմոգոգի-հասանիները, ջինլիները, Նախիջևանից եկած բենգերլիները, Մուղանից՝ շահսևանները: Ջևանշիր ցեղի առաջնորդները Հարթավայրային Ղարաբաղից սկզբում ներխուժեցին Ղարաբաղի նախալեռնային ու լեռնային շրջանները, իսկ այնուհետև հաստատվեցին այնտեղ որպես տեղական տիրակալներ (խաներ):

Սակայն Ղարաբաղյան խաներին չհաջողվեց վերջնականապես կոտրել այստեղ մնացած մելիքների դիմադրությունը: Նրանց միջև հակամարտությունները շարունակվեցին ընդհուպ մինչև 1813 թվականը, երբ Իրանի և Ռուսաստանի միջև Գյուլիստանի պայմանագրի համաձայն Ղարաբաղը անցավ Ռուսաստանին, իսկ ինն տարի անց խանությունը վերջնականապես

վերացվեց: Ղարաբաղի մելիքների դարավոր ձգտումը դեպի ռուսական պրոտեկտորատ ավարտվեց երկրամասը Ռուսաստանին միացումով:

Նիկոլայ 1-ինի 1828թ. մարտի 20-ի շնորհագրով, Թուրքմենչայի պայմանագրի կնքումից անմիջապես հետո, Ռուսաստանին միացված Նախիջևանի և Երևանի խանություններից կազմավորվեց Հայկական մարզ: Այդ մարզի մեջ էին մտնում Երևանի և Նախիջևանի գավառները և Օրդուբադի մարզը: 1840թ. օրինագծով Անդրկովկասում անցկացվեց վարչական բաժանում. ստեղծվեցին Վրաց-Իմերեթյան նահանգը՝ Թիֆլիս կենտրոնում, և Կասպիական մարզը՝ Շամախի կենտրոնով: Արևելահայկական տարածքների մեծ մասը, որպես գավառներ՝ մտան նշված նահանգի մեջ, իսկ որոշ տարածքներ էլ, այդ թվում Ղարաբաղը՝ Կասպիական մարզի մեջ: 19-րդ դարի 40-ական թվականների երկրորդ կեսին վարչական նոր փոփոխությունների հետևանքով Անդրկովկասում ստեղծվեցին հետևյալ նահանգները. Թիֆլիսի, Զուլթախիսի, Շամախու, ինչպես նաև Դերբենտի (որի մի մասը գտնվում էր Անդրկովկասում): Արևելահայկական տարածքները առանձին գավառների կարգավիճակով մտան առաջին երեք նահանգների կազմի մեջ:

1867թ. դեկտեմբերի 9-ի նոր կանոնադրությամբ Անդրկովկասը բաժանվեց հինգ նահանգների՝ Զուլթախիսի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի: Թիֆլիսի և Բաքվի նահանգների մեջ մտան վեցական գավառներ, իսկ Երևանի, Ելիզավետպոլի և Զուլթախիսի նահանգների մեջ՝ հինգական գավառներ: Արևելյան Հայաստանի տարածքի մի մասը մտավ Երևանի նահանգի կազմի մեջ, իսկ մի մասը՝ Ելիզավետպոլի և Թիֆլիսի նահանգների մեջ: Երևանի նահանգի մեջ մտավ նաև Նախիջևանի գավառը: Ղարաբաղի գավառը հիմնականում մտավ Ելիզավետպոլի նահանգի մեջ:

Այդպիսի վարչա-տարածքային բաժանումը, աննշան փոփոխություններով, պահպանվել է մինչև 1917թ.:

**ԱՐՑԱՆ-ԽԱՇՆԻ (ՂԱՐԱԲԱՂ) ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՆԱԽԱՆՆԱ ՓՈՒՍԱԿԱՆ ՅՐՁԱՆՈՒՄ:** — Հին պատմիչներն արձանագրում են, որ հայ թագավորներ Աղտաշեսի և Ջարեհի (մ. թ.ա. 2-րդ դար) ժամանակներում, համեմախնդեպս՝ Մորարենի ժամանակ (մ. թ. ա. 1-ին դար) Հայաստանի բնակչությունը եղել է միալեզու: այսինքն՝ հայախոս, բնականաբար. դա վերաբերում է նաև Արցախ-Օրխիստենային: Մ. թ. 7-րդ դարում Արցախը եղել է ոչ միայն էթնիկապես հայկական գավառ, այլև ունեցել է իր ծայրամասային արցախյան հայկական բարբառը, որի մասին վկայում է հիոնիսիոս Թրակիացու մեկնիչներից մեկը՝ Ստեփան Սյունեցին: Հաջորդ վկայությունը պատկանում է 13-րդ դարի առաջին տասնամյակների պարսիկ անանուն աշխարհագրագետի, որի համաձայն Խաչենի (այսինքն՝ Արցախի) բնակչությունը «հայկական է» («արմանիանդ») (այս հատվածի գոյություն ունեցող ռուսերեն թարգմանության մեջ անձեռնություն է թույլ տրված՝ «այնտեղ կան հայեր»), իսկ վրացիները՝ «նրանց արքային անվանում են թագավոր»: Վրացիների քաջատեղակությունը Խաչենի էթնաքաղաքական իրադրությանը ցուցադրվում է այն հաղորդումներով, որոնք պարունակ-

վում են «Թագակիրների պատմության և գովերգության» մեջ: Գերմանացի Հանս Շիլթբրեգերը, որը 15-րդ դարի սկզբին եղել է Ղարաբաղում, նշում է, որ այդ մարզը «գտնվում է Հայաստանում», իսկ «հայկական գյուղերը հարկադրված են նորոգված հեթանոսներին», այսինքն՝ մուսուլման ստրկարարներին (նոր հրատարակության մեջ Ղարաբաղի մասին հատվածը տեքստից հանված է): Ղարաբաղի էթնաքաղաքական և կրոնադավանական իրադրությանը տեղյակ իշխանական կառավարողները, ճանաչելով Աղվանքի հայերի հոգևոր առաջնորդին (այսինքն՝ Գանձասարի կաթողիկոսին), հաշվի էին առնում Կիլիկիայի հայ թագավորների քրաշխավորությունը, «որպեսզի Աղվանք վիճելիքի գանձասարյան հույերը նրան ճանաչեն որպես իրենց առաջնորդ և ղեկավար և իրենց կրոնի վերաբերմամբ դուրս չգան նրա ճառերի ու քարոզներից»:

Ղարաբաղի էթնիկական կազմը ոչ մի էական փոփոխությունների չի ենթարկվել հաջորդ դարերի ընթացքում: Հայազգի բնակչության խտության մասին է վկայում Ղարաբաղի կաթողիկոսների ու մեկնիկների 1725թ. ուղերձը Եկատերինա 1-ին, որի համաձայն Ղարաբաղի 6 մահալներից (օկրուգներից) յուրաքանչյուրում հաշվվում է՝ 30, 40, 50 գյուղ, յուրաքանչյուր գյուղում՝ 600, 500, 400, 200, 100, 50 ծովս: Դա հաստատում են նաև թուրքական պաշտոնական արխիվները, որոնց մեջ ասվում է, որ Ղարաբաղի լեռնային գյուղերի բնակչությունը «հայերի ցեղերից է»: Իրակլի 2-րդի 1769թ. արության մեջ ասվում է. «Ռամսը (այսինքն՝ Ղարաբաղը, նկատի է առնվում «հինգ մեկնիկները») կազմում է տերություն և նրա մեջ կան յոթ վոյեվոդական կառավարչություններ, ամբողջ ժողովուրդը հայկական օրենքի է, այդ տերության մեջ գտնվում է հայկական պատրիարքը»: Մի քանի տարի անց (1783թ.) Գ. Ա. Պոտոմկինը Եկատերինա 2-ին իր գեկուցագրում հաղորդում է. «Դեռևս չհնձենալով Չերոյ մեծության հրամանը, ես մակագրոսի թյուն եմ տվել գեներալ-Պոտոմկինին Իբրահիմ-խան Չուշինսկու մասին, որը նրան մերժեցնում է հնազանդության: Այստեղ քննարկման է ենթակա, որը նրան մերժեցնում է հնազանդության, որը կազմված է հայկական ժողորպեսզի հարմար դեպքում նրա մարզը, որը կազմված է հայկական ժողովուրդներից, տալ ազգային կառավարման և նրա միջոցով Ասիայում վերջ տեղծել ջրիստոնեական պետություն՝ նման Չերոյ մեծության գերագույն խոստումներին, որ իմ միջոցով տվել եք հայ մեկնիկներին»:

Պապել 1-ի 1797թ. հրամանագրում նշված է մարզի հայ բնակչության թիվը՝ 11 հազար ընտանիք:

Եվ, վերջապես, ասվածի նյութական հաստատումն է հանդիսանում այս տարածքում 1000 հայկական արձանագրությունների և հարյուրավոր քրիստոնեական պաշտամունքային կառույցների առկայությունը: Ասորում չկա միջնադարյան մուսուլմանական պաշտամունքային ոչ մի կառույց, ոչ հայերեն լեզվով ոչ մի արձանագրություն: Միայն 18-րդ դարի երկրորդ կեսից Փանահ խանի և Իբրահիմ խանի օրոք Չուշիում բնակչություն են հաստատել ոչ մեծ թվով բուլղար մուսուլմաններ:

Պատահական չէ, որ նույնիսկ մուսուլմանների բարձր ծնելիության դեպքում էլ մեր հարյուրամյակի սկզբի վրա նրանք կազմել են մեր երկրա-

մասի բնակչության 5 տոկոսից ոչ ավելին: Ղարաբաղը Իրանից եկած հայերով 19-րդ դարի 30-ական թվականներին բնակեցման մասին վարկածը իրական հողի վրա չի հիմնված: Բնիկ Ղարաբաղի հայերի քանակի մասին՝ մինչև Իրանից վերաբնակեցումը, կարելի է դատել ըստ 1823թ. աշխատանոցային ցուցակագրության, որի համաձայն այնտեղ հաշվվել է 5107 ծովս: Վերաբնակներից Ղարաբաղում բնակություն են հաստատել 700 ընտանիքներ, որոնցից 300-ը ետ են վերադարձել, իսկ մնացածների մի զգալի մասը գոհ է գնացել ժամտախտի համաճարակի:

1914թ. հայկական եկեղեցու Ղարաբաղի թեմը ուներ 222 գործող եկեղեցիներ, 188 հոգևորական, 206 հազար 768 ծխական, 224 հայկական գյուղ:

Եթե հաշվի առնենք պարսիկների, թուրքերի կողմից բազմիցս կատարված ներխուժումներն ու հայերի բնաջնջումները, պարսկական աղբյուրներում հիշատակված Ռաչենի բնակչության «համընդհանուր կոտորածը»՝ Ռազբեկ աթաբեկի օրոք, Թեյմուրազ 2-րդի և Իրակլի 2-րդի օրոք Ղարաբաղի հայերի վերաբնակեցումը Լոռիում, Շամշադինում և Կախեթիում (Թելավի), 1905-1906թ. թ. կոտորածը Չուշիում և շրջակա գյուղերում, ևսպա հասկանալի կգտնա, թե ինչպիսի դժբախտություններ է կրել այս երկրամասը և ինչքան անսասան է Ղարաբաղի հայերի նվիրվածությունը հարազատ հողին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄՅԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ: Մարզի 4,4 հազ. բառ. կիլոմետրանոց տարածքում կան ավելի քան 1600 պատմության ու ճարտարապետության հուշարձաններ՝ ամրոցներ, վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, կամուրջներ ու քարվանսարաններ, բնակատեղեր ու պալատներ (ամարաթներ), հին գերեզմանատներ, հուշակոթոններ, խաչքարեր և ավել: Հուշարձանների հիմնական օժտվածությունն է տոնական պաշտամունքային կառույցներ են, որոնք ստեղծվել են երկրամասի բնակիչների բազում սերունդների կողմից: Դրանք ժամանակագրական կերպով ներկայացնում են միջնադարյան պատմության բոլոր մոտերը, ընդգրկելով 4-րդ դարում քրիստոնեության ընդունումից մինչև 19-րդ դարն ընկած ժամանակաշրջանը: Հուշարձանների հիմնական մասի էթնամշակութային պատկանելությունը որոշվում է ոչ միայն հնում և ներկայումս երկրամասի բուն էթնիկական կազմով, պատմական սկզբնաղբյուրների հաղորդումներով, տեղական գրիչների կազմած կամ արտադրած ձեռագիր ձխամատյաններով, հարյուրավոր արձանագրություններով: Միայն Գանձասարի վանքի պատերին պահպանվել են բացառապես հայերեն 182 արձանագրություններ: Քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետության հուշարձանները, հատկապես այնպիսիք, ինչպիսիք են Գանձասարը, Ամարասը, Դաղիվանքը, Հակոբավանքը, Գուշավանքը, Ղազանչեցոց եկեղեցին, Վաչագանի եկեղեցին, Օխտը դոնին և ուրիշներ, իրենցից կենդանացնում են համրական ճարտարապետության ուսուցանող անսխալ նախատույլ դպրոցը և համամիութենական նշանակության հուշարձաններ են իսկապես: Ինչքան էլ տարօրինակ լինի, պաշտոնապես գրանցված



## ԱՆՐԱԳԵՅ ԳՈՐՈՂԵՑԿԻ

## Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ

1600 հուլիսի 1-ին կառավարության կողմից պահպանվողների կառավարման համակարգը 164-րդ հոկտեմբերի 1-ին մնացածները, այդ թվում նաև Ամառաս վանքը (4-րդ դար) թողնված են բախտի քմահաճույքին, որից էլ, ի դեպ, օգտվում են մուսուլմանական կողմի որոշ հնէաբաններ, զանձ որս սողնոր ու նախանձամիտներ, որոնք անարգել կերպով ավերում են դրանք, երբեմն էլ «հետազոտությունները» կատարելով պայթուցիկ նյութերով: Ուղեցույցերում և տուրիստական քարտեզներում հիմնականում նշված են 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի հուլիսի 1-ինները, այսինքն՝ այն ժամանակաշրջանի, երբ երկրամասում առաջին անգամ երևան են եկել մշակույթներն ու խաների պալատները (Շուշի): Հայկական դարավոր հուշարձանների պրոպագանդան, դրանց ձեռնհաս վերանորոգումը քիչ են հետաքրքրում հանրապետական կուսակցական ու պետական մարմիններին: Այդ պատճառով վերջին տասնամյակների ընթացքում ոչնչացվել են տասնյակ հին բնակավայրեր, գերեզմանատներ, հուշակոթողներ, խաչքարեր, արձանագրություններ և այլն: Հաճախ էլ դրանք վերածվել են աղբեղանակալի գյուղերում անհատական տների, ակումբների, խանութների կառուցման համար շինարարի ձեռքբերման վայրերի: Ուղեցույցում եկեղեցու հայթաջանդակները որպես թիրախներ են ծառայել հրաձգության սիրահարների համար: Ավերվել է Ազուլեցոց եռանակ բազիլիկ եկեղեցին, Մեղրեցոց եկեղեցին կիսավեր է և վերածվել է ամառային կինոթատրոնի, իսկ «Կանաչ ծամ» եկեղեցին կոպիտ վերակառուցման է ենթարկված ու վերածված հանքային ջրեր խմելու սրահի և այլն:

Թե դեպի ուր է տանում այս միտումը, առավել պարզ երևում է Նախիջևանի ԻՄՍՀ-ի հայկական պատմական հուշարձանների ծակտագրի օրի նակով, որտեղ արդեն գործնականում հայազգի բնակչություն չկա: 1930-ից մինչև 1978թթ. ընկած ժամանակաշրջանում Նախիջևանի ԻՄՍՀ-ի տարածքում ավերվել են մինչև 30 հուշարձաններ, այդ թվում 19 եկեղեցի, 3 տաճար, 2 եկեղեցային գավիթ ու զանազակառույցներ, երեք հին գերեզմանատուն և այլն:

(Нагорный Карабах Историческая справка, Изд. АИ Арм. Ереван, 1988 г.)

Ամեն երկիր, ամեն ազգ իր ավանդական պատվարն ունի: Երբ ժողովրդի պատմությունը հաջող ընթացք է ունենում, այն դառնում է մշակութային ու քաղաքական կյանքի կենտրոն: Իսկ երբ ծակտագրիկ հալածում է ազգին, այն դառնում է ազգային կյանքի հենարան, հույզերի կղզի, վերածնության երաշխիք:

Հայ ժողովրդի համար հենց նշված վերջին դերն է խաղացել ու խաղում է Ղարաբաղի լեռնային մարզը:

Բուն բնությունն է նրան հսկայական նշանակություն տվել:

Այնտեղ, Ղարաբաղի անտիկ բարձունքներում, որ Կարսի և Ալանի բարձրավանդակների շարունակությունն են, ալեկի քան երկու հազար տարի հայ ժողովուրդը տոկացել է չոչվոր ցեղերի հարձակումներին՝ պահպանելով իր մշակույթը, պահպանելով իր ազգային դեմքը:

Ազգագրական, տնտեսական ու լեզվային առումով լինելով միամասկան, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպիսին է նա եղել անցյալում, այդպիսին է ներկայումս, և այդպիսին կլինի ընդմիջտ, քանի որ առանց Ղարաբաղի տեղը լինելու, անկարելի է պաշտպանել Հայաստանի սիրտը, Արարատյան դաշտավայրը: Պատմության ընթացքում բազմիցս են հարձակման ակնքները գարնվել ու փշրվել Ղարաբաղի ամրությամբ, թափանցելով սուկ գետահովիտները, բայց այդտեղ էլ երկար չեն մնացել: Այդպիսի (այդպես էր կոչվում Ղարաբաղը) իշխանության մեղիությունները հին ժամանակներում բազմիցս են սեփական ուժերով տեղի հողերից բշել թշնամուն: Պատմությունը կրկնվում է, և վերջին անգամ դա տեղի ունեցավ մեր աչքի առաջ:

Բնությունը և պատմությունը Ղարաբաղում ստեղծել են վառ արտահայտված տիպ: Աշխարհով մեկ սփռված Ղարաբաղցիներին հեշտ է ճանաչել ամենուր: Գործունեության լայն թափ, անձնուրաց քաջություն, կյանքը վտանգելու պատրաստակամություն, ինքնավստահություն, ինքնատիպ համառություն, շիտակ նպատակամտություն, կենցաղի նահապետականություն՝ ահա Ղարաբաղցու համակրելի հատկանիշները, որոնք ասես հայի հին առաքինությունների համակենտրոնացում են, առաքինություններ, որ խամրել են պատմության դաժանություններից և զուտ տեսքով պահպանվել Ղարաբաղում: Բարձրահասակ, պնդակզմ ժողովուրդը, կյանքը փրկելու համար բարձրախալով լեռները, ամրապնդվեց լեռնային օդի ազդեցությամբ և իրեն գերթ պահեց այն վարակներից, որոնք բաժին են ընկնում հովիտների բնակիչներին:

Հայաստանի ազգային հիշողությունը պետք է պահպանի անվանի շատ Ղարաբաղցիների հիշատակը: Չկա մի այնպիսի բնագավառ, որտեղ

Նրանք դրսևորած չլինեն իրենց ձեռներեցությունն ու տաղանդը: Զաղաքակառուցություն, գրականություն, հասարակական գործունեություն, ստեղծարար՝ այլ ամենը աշխատանքի ասպարեզ է յառաջելու նրանց համար:

Տալով բազմաթիվ նշանավոր գործիչ-այրեր, Ռարաբաղը ստեղծել կամ ավելի ճիշտ՝ իր գուտ տեսքով պահպանել է նաև հայ կնոջ տիպը, որի հոգեբանության մեջ ու կենցաղում շատ բան է պահպանվել նահապետականությունից: Իր մշակույթով ու կենցաղով դարբնված Ռարաբաղը մեր օրերում ևս ստվեր չի գցել իր վաղեմի փառքի վրա: Ինչպես Թամեղանի ժամանակներում, հավաքելով իրենց գորագնդերը, մեյիքները պաշտպանեցին Ռարաբաղի անկախությունը: Ծուշիի միջադեպը չփոխեց Նուրի Փաշայի պարտության ընդհանուր պատկերը, և պաշտպանության գիծը, ըստ էության, մնաց անձեռնմխելի, ինչպես Նախկին հարձակումների ժամանակներում:

Այդպիսին է Ռարաբաղի նշանակությունը Հայաստանի համար: Եթե Հայաստանը կորցներ Ռարաբաղը, ապա ազգերի ինքնորոշման գաղափարը հարկավ խիստ կոտրահարվար: Եվ ընդհակառակը, տերը լինելով Ռարաբաղի, Հայաստանը կստանա մշակութային եհանդազին ուժի հուժկու հորձանք, որը հորդելով Հայաստանի ավերված տարածությունները, դրանք կբեղմնավորի մշակույթով և դբանով իսկ կամբողջացնի Ռարաբաղի բազմադարյան պանծալի պատմությունը:

Յուրաքանչյուր ժողովուրդ հիմա փնտրում է իրենը: Վերածնված ազգերի ամբողջ ապագան կախված է այն բանից, թե նրանք իրենց մեջ ազգային մշակույթի բավականաչափ, այսպես ասած, մակարդ կգտնեն արդյոք: Նման պայմաններում բոլոր կենտրոնները, որտեղ այս կամ այն պատճառով կենտրոնացվել է մշակութային կյանքը, բացառիկ նշանակություն են ստանում: Այդպիսին է Ռարաբաղի նշանակությունը Հայաստանի համար:

Ժիշտ է, պատմությունը Հայաստանին ձգել է դեպի հարավ, դեպի տաք ծովը, և գուցե հենց այդտեղից հորդեն ուժեր, որոնք Ռարաբաղը դարձնեն Նոր Հայաստանի հյուսիսային ծայրամասը:

Բայց այդ դեպքում ևս նա չի կորցնում իր նշանակությունը՝ իրն անձեռնմխելի և դարբերում քննություն բռնած մշակույթի ֆոնը:

«Վերածնված Հայաստան» 1989թ. № 1.

9. 4. ՉԻՉԵՐԻՆ.

Վ. Բ. Անիսիմ Նզված համակից, Լոսիս, 1920թ.

Ռարաբաղը վաղեմի հայկական տեղանք է, բայց հովիտներում հայերին կոտորելուց հետո այնտեղ բնակություն են հաստատել թաթարները (ալախներ՝ աղբբեջանցիները), իսկ լեռներում մնացել են հայերը:

«ՆՆ Կ Կեհակուն տպեթեր ՄԻՄ ՀԵԱ, ք. 2, գ. 14 516 թ. 2»

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԲԾՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ արհեստականորեն տարանջատված երկու մասերի վե լիամիավորման համար Արցախում և Հայկական ԽՍՀ-ում ժողովրդական շարժման սկզբից Աղբբեջանական ԽՍՀ-ի պարբերական մամուլում էրևան եկան ժողովրդական շարժման էությունը խեղաթյուրող հրապարակումներ: Ամբողջ մի ժողովրդի արդարացի պահանջը ներկայացվում էր որպես ոտնձգություն Աղբբեջանի տարածքային ամբողջականության դեմ, իսկ լինդհանուր շարժումը մեկնաբանվում էր որպես ներքին և արտաքին սաղորչների կողմից հրահրված գործողություններ:

Աղբբեջանական գեղարվեստական գրականության մեջ երևան եկան այնպիսի գործեր, որոնք աղբբեջանցիների գրիտասարդ սերնդի մոտ անվստահություն են դաստիարակում հայ ժողովրդի նկատմամբ: Աղբբեջանցի պատմաբանների, աշխարհագրագետների, արվեստագետների՝ այս պես կոչվող գիտական աշխատություններում (այն թափ ստացավ պատմության կեղծումը: Նրանք մեթոդիկ կերպով ձգտում են կողոպտել հայոց պատմությունը, հայ ժողովրդի ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները: Վաղեմի հայկական հողերը՝ Արցախը, Ջանգեզուրը, Նախիջևանը, Նուբնիսկ Հայկական ԽՍՀ-ի տարածքը նրանք համարում են, թե պատմականորեն պատկանում են Աղբբեջանին:

Հայ-աղբբեջանական ազգամիջյան հարաբերություններում լարվածություն ստեղծող պատճառների թվում եղել է և մնում է Ռարաբաղի հրատապ հնարքը: Հայտնի է, որ Հայաստանի այդ մասը, նրա բնակչության կամ քին հակառակ, առողջ բանականությանը հակառակ, պոկվել է մայր հայրենիքից և հանձնվել Աղբբեջանին: Այդ ժամանակից ի վեր՝ 1920-ական թվականների սկզբից, դարաբաղյան հարցը լարվածության իսկական աղբբուր է հանդիսանում: Աղբբեջանում չեն ցանկանում խեղամուխ լինել հարցի էության մեջ, աղբբեջանցի պատմաբանները կեղծում են պատմական ակնհայտ փաստերը, այդ լեռնային երկրամասը Աղբբեջանին պատկանալու են «ապացուցում»:

Աղբբեջանցի պատմաբան Դ. Գուլինը պնդում է, թե Անդրկովկասում «խմաճախարհային ինպերիալիզմի ծախտու վերջնակալների կառավարման շրջանում... Լեռնային Ղարաբաղի բնակչությունը վճռակալներն արտահայտվել է երկրամասը Աղբբեջանի սահմաններում թողնելու օգտին»: Իր հայտնազորմած «պատմական ճշմարտությունը» հաստատելու համար նա բերում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի զեկուցման մեջ Ա. Ի. Միկոյանի 1919թ. մայիսի 22-ի հաղորդումը Վ. Ի. Լենինին այն մասին, թե, «դաշնակները՝ հայ կապաև կառավարության գործակալները, ձգտում են Ղարաբաղը միացնել Հայաստանին, բայց դա Ղարաբաղի բնակչության համար կնշանակեր զոկվել իրենց կյանքի աղբբությանը՝ Բաքվից և կապվել Էրիվանի հետ, որի հետ երբեք և ոչնչով կապված չեն եղել: Հայ գյուղացիությունը 5-րդ համազումարում որոշել է ծանաչել և նույնպես միանալ Խորհրդային Աղբբեջանին», և թե Ա. Մ. Կիրովը Ա. Ի. Միկոյանի զեկուցման մասին Վ. Ի. Լենինին հաղորդել է 1919թ. հունիսի 2-ին ուղարկած հեռագրում:

Եվ այսպես, մեր հարգելի գիտնականը այստեղ էլ՝ այս մի քանի տողերում, պատմական փաստերի աղավաղում է թույլ տալիս:

Սկսենք նրանից, որ իբր Ա. Ի. Միկոյանը 1919թ. մայիսի 22-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմին զեկուցել է այն մասին, թե հայ գյուղացիությունը 5-րդ համազումարում որոշել է ծանաչել և նույնպես միանալ Խորհրդային Աղբբեջանին: Այն, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության 5-րդ համազումարը տեղի է ունեցել 1919թ. (այսինչ ամսաթվով) կառարելապես ճիշտ է, բայց ճիշտ է և այն, որ այդ համազումարում այդպիսի որոշում ընդունվել չէր կարող, այն պատճառով, որ 1919թ. Խորհրդային Աղբբեջանը դեռևս գոյություն չուներ:

Իրականում Լեռնային Ղարաբաղի հայերի 5-րդ համազումարը ընդունել է տրամազծորեն հակառակ որոշում: Ահա այդ համազումարի 1919թ. ապրիլի 26-ի պատասխանը մուսավաթական կառավարության ներկայացուցիչ, Ղարաբաղի զենեղալ-նահանգապետ Խոսրով Բեկ Սուլթանովին (որն, ի դեպ, իրական իշխանություն չի ունեցել Ղարաբաղի լեռնային մասում), «հ պատասխան 26ր 1919թ. ապրիլի 25-ի № 937 գրության, Ղարաբաղի հայերի 5-րդ համազումարը ձեզ ի գիտություն է հայտնում, որ զենեղալ Շատելվորտին տված իր միահամուտ և կտրուկ պատասխանից և համազումարի համար աղբբեջանական իշխանության՝ ինչ ձևով էլ որ այն լինի, անընդունելիությունից հետո որոշ հարցերի համատեղ քննարկման մասին 26ր առաջարկը համարում է անընդունելի:

5-րդ դարաբաղյան հայկական ազգային համազումար»:

Հայկ. ԽՍՀ ԿԳՊԱ, ֆ. 276, ցուցակ 1, ցործ 42, թուղթ 159:

Փաստաթղթերում Շատելվորտի անունը հիշատակվում է այն պատճառով, որ նա, որպես Անդրկովկասում անգլիական քաղաքականության անցկացնողներից մեկը, Արցախի հայ բնակչությունից պահանջել է անտարապահորեն ենթարկվել մուսավաթական Աղբբեջանի վարչական իշխան

թխանը: Ի պատասխան դրան, 1919թ. ապրիլի 23-ին հայազգի բնակչության ղեպուտատների 5-րդ համազումարը կտրուկ տոնով է պատասխանել անգլիացի զենեղալին:

«Բազարձակապես ոչինչ չունենալով հարևան թուրք ժողովրդի ինքնուրոշման դեմ և էլնելով այն բանից, որ բոլոր վիճելի տարաձեյային հարցերը պետք է իրենց վերջնական լուծումը գտնեն խաղաղ կոնֆերանսում, Ղարաբաղի հայերը իրենց են վերապահում ինքնուրոշման նույնպիսի իրավունքներ:

Աղբբեջանական զենեղալ-նահանգապետության իշխանությունը դարաբաղի հայերի վրա տարաձեյու հարցի կապակցությամբ Ղարաբաղի հայերի 5-րդ համազումարը անհրաձեյտ է համարում հաղորդել, որ Աղբբեջանը միշտ էլ Թուրքիայի հանցակիցն ու միջնորդն է սղել հայերի դեմ՝ ընդհանրապես, և դարաբաղի հայերի դեմ՝ մասնավորապես, նրանց ցարանությունների մեջ, նա այդպիսին է հանդիսանում նաև հիմա... այդ «կառավարությունը» մինչև օրս չի դադարել թուրքերի վերադարձի մասին երազելուց և շարունակում է սխտեմատիկ կերպով ծնշել հայերին:

Տնտեսական բուկտոր, որը հաստատվել է թուրք փաշաներն այստեղ գալուց, դարձել է հայերին ծնշելու համար աղբբեջանական կառավարության պետական համակարգը: Ազգակությունը, կողոպուտը, սպանությունները, առանձին մարդկանց հետապնդումը հանդիսանում են Աղբբեջանի վարքի նորմաները իր նպատակին հասնելու համար...

... Մենք համոզված ենք, որ ներկայիս Աղբբեջանը, հետևելով իր ավագ սղոր՝ Թուրքիայի օրինակին, ձգտում է լիովին ոչնչացնել հայերին... հատկապես դարաբաղի հայերին... որոնք մինչ այսօր պաշտպանել են իրենց ազատությունը և բարբարոսության ու ավերումների չեն ենթարկվել:

Բացի այդ, համազումարը գտնում է, որ Ղարաբաղի հայության քաղաքական, պատմական, կոլտուր-իրավական և հատկապես տնտեսական պայմանները ոչ մի դեպքում չեն կարող հիմք ծնալու իր ժողովրդին, ժամանակավորապես անգամ, Աղբբեջանի վարչական իշխանությունը պարտադրելու համար:

Հիմնվելով այս ամենի վրա, Ղարաբաղի հայության 5-րդ համազումարը անընդունելի է համարում վարչական իշխանության ամեն մի ձև, որը կունի է Աղբբեջանից:

Դրա հետ միասին, ներկայացնելով համազումարի բոլոր դեպուտատներին կողմից միաձայն ընդունված ու ստորագրված բանաձևը, որը մերժում է զենեղալ-նահանգապետի ժամանակավոր իշխանության ծանաչումը, Ղարաբաղի 5-րդ համազումարը հաղորդում է, որ իր որոշումը հիմնավորապես է իր ընտրողների անընդունելի որոշումն ու հաստատուն կամքով, որում անգլիական հրամանատարությունը կտրուկ է, եթե ցանկանա, համոզվել, անցկացնելով համաժողովրդական հանրաքվե»:

Հայկական ԽՍՀ ԿԳՊԱ, ֆ. 199, ց. 1 ց. 35, թ. 27

Հատկանշական է, որ 1918-1920թթ. ընթացքում տեղի ունեցան Արցախի հայ բնակչության ներկայացուցիչների ինն համագումարներ: Ութ համագումարներում վճռականորեն մերժվել է Ադրբեջանի իշխանության ճանաչման մասին մուսավաթական կառավարության պահանջը, և, ավելին, բոլոր համագումարների բանաձևերում աներկիմաստ կերպով հայտարարվել է, որ Արցախ-Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի անկապտելի մասը: Եվ միայն 7-րդ համագումարը Անդրկովկասում անգլիական օկուպացիոն զորքերի կոպիտ ճնշման տակ ստիպված է եղել ժամանակավորապես կոմարոմիսի դիմելու մուսավաթական կառավարության հետ: Նրանց միջև կնքվեց 1919թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնագիրը: Այդ ակտի համաձայն, հայկական Արցախը ժամանակավորապես՝ մինչև Փարիզի խաղաղ կոնֆերանսի որոշումը, ճանաչեց Ադրբեջանի իշխանությունը, բայց այն պայմանով, որ հայկական շրջանների վարչական կառավարումը իրականացվի միայն հայկական ընտրովի մարմինների կողմից և որ մուսավաթական կառավարությունը զորամասեր չմտցնի հայազգի բնակչություն ունեցող տարածքը:

Ի դեպ, նույնիսկ այդ՝ մուսավաթականների համար անցանկալի հաճախագիրը ձեռք է բերվել, ինչպես նշվեց վերևում, անգլիական շանտաժի շնորհիվ: Անգլիացիները, հետևելով իրենց ավանդական քաղաքականությանը, նպատակ ունեին ազգամիջյան խտրականության բոլորքմանը Անդրկովկասում: Տվյալ դեպքում նրանք, ելնելով կոնյուկտուրային նկատառումներից, ակնհայտորեն անտեսում էին Արցախի հայերի շահերը մուսավաթականների հետ նրանց բախման մեջ: Դեռևս 1919թ. փետրվարի սկզբին Շուշիում անգլիական առաքելության ղեկավար մայոր Մոնկ-Մոգզոնը Ղարաբաղի հայկական ազգային խորհրդին է դիմել երկրամասը վարչականորեն Ադրբեջանին ներթափելու նախագծով: Նույն թվականի փետրվարի 20-ին Հայկական ազգային խորհուրդը իր հակառաջարկում մերժել է անգլիացիների առաջարկությունը: Ջայրացած անգլիացի գեներալ Շառտելվորտը 1919թ. մարտի 26-ին գալիս է Շուշի քաղաքը և Ղարաբաղի հայկական ազգային խորհրդի ներկայացուցիչ Ա. Ծահնագարովի և Շուշվա քաղաքագույնի Գ. Ծահնագարովի հետ բանակցությունների ժամանակ չառաջարկել կորպով հայտարարում է. «Ես նախազգուշացնում եմ, որ Ադրբեջանի և նրա գեներալ-նահանգապետի դեմ ամեն մի բախում իրենից ներկայացնում է ելույթ Անգլիայի դեմ: Մենք այնքան ուժեղ ենք, որ կարող ենք ձեզ ստիպել ենթարկվել»:

Հայկ. ԽՍՀ, ԿԳՊՊ, ֆ. 200, ց. 1, ք. 243, Խ. 107-108:

Բայց այդ սպառնալիքը ևս հայերի վրա չներգործեց, որոնք հաստատակամորեն կանգնած էին իրենց դիրքերում: Չնայած դրան, 1919թ. ապրիլի 5-ին Շատելվորտը Բաքվում որոշում հրապարակեց Սուլթանովին Ղարաբաղի գեներալ-նահանգապետ նշանակելու մասին, որին, ինչպես մենք արդեն գիտենք, 5-րդ ղարաբաղյան հայկական համագումարը արժանի պատասխան է տվել:

Հետագայում անգլիացիներն ուժեղացրին ճնշումը, իսկ մուսավաթական կառավարությունը իր նպատակին հասնելու համար, այսինքն՝ Արցախը զավթելու համար բարբարոսական մեթոդների դիմեց: 1919թ. մայիսի 4-ին և 5-ին Լա հայերի կոտորած կազմակերպեց Ղախալուշեն, Կրկտու՝ Փահլուր, Գալաշեն և այլ գյուղերում: Բոլոր կողմերից մուսավաթական ավազակներով շրջապատված Արցախը (այն ժամանակ մնացյալ Հայաստանը չկարողացավ իրական օգնություն ցույց տալ) ստիպված էր զիջումներ կատարել և ընդունել 1920թ. օգոստոսի 22-ի համաձայնագիրը:

Սակայն այդ համաձայնագիրը բազմիցս խախտվել է մուսավաթական իշխանությունների կողմից, քանի որ նրանց չէր բավարարում Արցախ-Ղարաբաղի փաստացի գոյությունը որպես քաղաքականապես ինքնուրույն սիպար: Նրանք շատ ասգամ են ապագրյուս կերպով փորձել գեներալու դաժան տնտեսական շրջափակման միջոցով իրենց թելադրանքին ենթարկել այս երկրամասը:

Ցանկանալով մեկընդմիջում վերջ տալ Արցախի ինքնուրույնությանը, 1920թ. մարտի սկզբից մուսավաթականները համարյա իրենց բոլոր կանոնավոր զորքերն ու բազմաթիվ զինված ավազակախմբեր ադրբեջանական բանակի հրամանատար գեներալ Մեհմանդարովի գլխավորությամբ նետեցին նրա սահմանների մոտ: Իսկ մարտի 20-ին հայ բնակչությանը զինաթափման վերջնագիր ներկայացրին: Արժուժ ստանալով, մուսավաթական զորքերը լայն ծավալի ռազմական գործողություններ սկսեցին միաժամանակ Արցախի և Ջանգեղուրի հայ գյուղացիության դեմ: Սկզբում նրանց հաջողվեց գրավել մի քանի բնակավայրեր և հերթական չարագործություններ կատարել: Եսակայն բոլոր զինված գյուղացիները, ովքեր անգամ արդեն օգնության հասած Հայաստանի կանոնավոր զորքերի փոքրաթիվ ստորաբաժանումների հետ միասին, ջախջախացին մուսավաթականներին, նրանց դուրս բջելով զավթած հողերից:

1920թ. ձմռան-գարնան այդ իրադարձությունների տուն շրջանում տեղի ունեցան Արցախի վերջին երկու համագումարները, որոնցում նորից հայտարարվեց մուսավաթական Ադրբեջանի իշխանությունը չճանաչելու մասին և դեպի մայր հայրենիքի հատ վերամիավորում լեռնային երկրամասի բնակչության կողմնորոշման մասին: Մասնավորապես, իններորդ համագումարի լիազորելիքը 1920թ. մայիսին Մոսկվայում Հայաստանի ներկայացուցչության միջոցով հետևյալ ուղերձն են հղել ՌԽՖՍՀ ԱԳ ժողովրդական կոմիտեի 2-իչերինին. «Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիության իններորդ համագումարը սույն թվականի ապրիլի 23-29-ին որոշեց:

1. Համաձայնագիրը, որը Ղարաբաղի 7-րդ համագումարի անունից կնքվել է ադրբեջանական կառավարության հետ, վերջինիս կողմից խախտված համարել Ղարաբաղի խաղաղ բնակչության վրա ադրբեջանական զորքերի կազմակերպված հարձակման, Շուշիում և գյուղերում բնակչության բնաջնջման պատճառով:
2. Հայտարարել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հանրապետության հետ միավորման մասին, որպես նրա անբաժանելի մասը

3. Մտկվալում Հայաստանի հանրապետության պատվիրակությանը խնդրել համագումարի որոշման մասին հայտնել ի գիտություն: Ռուսաստանյան խորհրդային կառավարությանը:

Հուլի. 10/2, 1946 թ., թ. 220, գ. 1, գ. 531, թ. 95:

Եվ այսպես, մեր կողմից բերված պատմության աղբյուրները և նրանի պետական արխիվներում ու գրադարաններում պահվող շատ ուրիշ նյութեր ուրվագծում են 1919-1920թթ. Արցախ-Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունների պատմական ճշմարտությունը: Իսկ փաստաթղթերի հարստության բազայի վրա հիմնված այդ պատմական ճշմարտությունը կարևոր է հետևյալում:

1. Արրբեջանական պետությունը, որին գլխավորում էին մուսավաթա եսևները, իր ծագումից էետու վարել է ոչ միայն Արցախի, այլև Զանգեզուրի, Նախիջևանի, Շարուր-Պարալագլազի հայկական հողերի զավթման քաղաքականություն:

2. Արցախի հայ բնակչությունը 1918-1920թթ., ընդհուպ մինչև խորհրդային իշխանության հաստատումը Արրբեջանում, կարողացել է իր լեռնային երկրամասը պաշտպանել մուսավաթական, ափազակայնների բազմաթիվ ասպատակություններից և դրանով իսկ պահել պաշտպանել իր քաղաքական անկախությունը Արրբեջանից:

1920թ. ապրիլին, այսինքն՝ Արրբեջանում խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին, Արցախը վերամիավորված է եղել Հայաստանի հետ:

**ՎԱՆՈՒՄԻ ԷՎՈՅԱՆ**

Հայկական ԽՍՀ կենտրոնական պետական արխիվի տնօրեն

«Կանոնիստ» թերթ, հեռան, աստեթեն, № 1 165, 13.07. 1959».

**Հավելված № 5**

Ս. Մ. Կիրով: (Վ. Ի. Անիբին Երվան համակից), 3 հունիսի, 1949թ.

Ղարաբաղը և Զանգեզուրը չեն ծանաչում Արրբեջանի կառավարությունը և մուսավաթականների ու այդ մարզերի հայ հայրենասերների միջև ընթանում են ազգամիջյան կատաղի ծակատամարտեր:

Ս. Մ. Կիրով: Հուլիաններ, հունիս, փաստաթղթեր: Մ. 1938, № 1, էջ 144:

**ժողովրդական կոմիսարների խորհրդի**

**Դ Ե Կ Ր Ե Տ Ը**

«Թուրքահայաստանի» մասին:

29 զեկտեմբերի 1917թ. (11 նոյեմբերի 1918թ.)

Հաստատված է խորհրդների 3-րդ Համաստատանյան նամակների կողմից 13 (28) նոյեմբերի 1918թ.

ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայ ժողովրդին հայտարարում է, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը ընդհուպ մինչև լրիվ անկախություն:

ժողովրդական կոմիսարների խորհուրդը գտնում է, որ այդ իրավունքի գոյությունը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմանով, որոնք բացարձակորեն անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար:

ժողովրդական կոմիսարների խորհուրդը այդպիսի երաշխիքներ է համարում.

1. Ջուրջեյի զուրս բերումը «Թուրքահայաստանից» և «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական և ունեցվածքային անվտանգության ապահովման ձապատակով հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ ստեղծումը:

2. Փախստական հայերի, ինչպես նաև զանազան երկրներում ցրված հայ տարագիրների անարգել վերադարձը «Թուրքական Հայաստան»:

3. Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստան», ինչի վրա ժողովրդական կոմիսարների խորհուրդը պնդելու է թուրքական իշխանությունների հետ խաղաղ բախակցությունների ժամանակ:

4. «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական վարչության ստեղծումը դեմոկրատական սկզբունքներով ընտրված հայ ժողովրդի Պեպուսատների խորհրդի ձևով: Կովկասի գործերով Արտակարգ ժամանակավոր կոմիսար Ստեփան Թահումյանին հանձնադրվում է «Թուրքահայաստանի» բնակչությունը ամեն տեսակ օժանդակություն ցույց տալ 2-րդ և 3-րդ կետերի իրականացման գործում, ինչպես նաև ձեռնառնել լինելու խառն էանձևաժողովի ստեղծմանը՝ «Թուրքահայաստանի» սահմաններից զորքերի դուրս բերման ժամկետներն ու եղանակը սահմանելու համար: (1-ին կետ):

Յանքուբյուն. «Թուրանական» արտահանողական գործակալները  
առջվում են պեմոկրատորեն քննարկած հայ ժողովրդի ներ-  
կայացուցիչների կողմից՝ օկուպանտի պեմոկրատորեն րե-  
տրված խառն և վիճարկի (մատուցման կամ և այլն) ներ-  
կայացուցիչների հետ համաձայնեցմամբ՝ կովկասի դարձերի  
և տարածք ժամանակավոր կամիսարի հետ համաձայն:

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ **Վ. ՌԱՅԱՆՈՎ**  
(ԼԵՆԻՆ):

Ազգայությունների գործերի ժողովրդական կոմիսար **Ի. ԶՈՒԿՈՎՍԿԻ**  
(ՍՍԱԿԻ):

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի գործերի կառավարիչ  
**Վ. ԲՆՆՉԲՈՒՆՈՎ:**

Խորհրդի քարտուղար **Ն. ԳՈՐԲՈՒՆՈՎ:**

Հովելված № 7

Ա. Գ. Ժ. Կ. ի 1920թ. սեպտեմբերի 20-ի բյուրոյի

### ԱՂՐԲԵՋԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Թիֆլիսի «Նովոստի դևյա» թերթի հուլիսի 30-ի համարում երևույթ-  
րակված է հետևյալ արտասույությունը.

Ղարաբաղի հայ բնակչության ներկայացուցիչներ Ն. Երզնկյանը և  
Փիրումովը, որոնք իբրև պատգամավորներ Խորհրդային Ռուսաստան են  
ուղարկվել Բաքվում Ղարաբաղի մասին բանակցությունների համար: Օր-  
ջոնիկիձեին են դիմել հետևյալ հեռագրով.

«Աղբեջանի Խորհրդային հանրապետության կառավարությունը  
վերջնագիր է ներկայացրել, որից կարելի է եզրակացնել, թե երկու մար-  
զեր՝ Ղարաբաղն ու Ջանգեզուրը, որոնց բնակչությունը բացառապես հա-  
եր են, պետք է որ միացվեն Աղբեջանին, այնինչ այդ մարզերի բնակչու-  
թյունը իրենց գյուղացիական համագումարներում կտրականապես հրա-  
ժարվել են միանալ Աղբեջանին: Ջանգեզուրի և Ղարաբաղի աշխատա-  
վոր գյուղացիությունը իր ազատության և անկախության համար գենքը  
ձեռքին մարտնչել է ինչպես թուրք իմպերիալիստների դեմ, այնպես էլ հե-  
տագույն Ատանտայի իմպերիալիզմի և աղբեջանական մուսավաթական  
կառավարության դեմ: Աղբեջանի հետ Ղարաբաղի և Ջանգեզուրի բռնի  
միացման քաղաքականությունը շղել է Թուրքիայի, Ատանտայի՝ և Մուսա-  
վաթի քաղաքականությունը:

Բաքվի հեղաշրջման և մուսավաթական կառավարության անկման  
մասին լուրերը մեծ ցնծություն են առաջ բերել Ղարաբաղի և Ջանգեզու-  
րի գյուղացիության մոտ, որը համոզված է եղել, որ այս անգամ Խորհրդ-

դային Ռուսաստանը նրանց երաջխավորում է ամեն տեսակ բռնությունից,  
որտեղից էլ որ այն բխի:

Խորհրդային Աղբեջանի վերջնագիրը անհանգստության զգացում է  
առաջ բերել, իսկ խորհրդային կարգերի թշնամիներին՝ նոր առիթ է սպել  
գյուղացիությանը համոզելու, թե Խորհրդային կառավարությունը պատ-  
րաստվում է Աղբեջանի հետ միասին ազրեբիվ գործողություններ ձեռ-  
նարկելու գյուղացիության դեմ: Ինչպես Անդրկովկասում խորհրդային իշ-  
խանության վարկի, այնպես էլ Ղարաբաղի աշխատավոր ժողովրդի բարօ-  
րության տեսակետից ինչպես ենք ձեզ, Աղբեջանի խորհրդային իշխա-  
նությունը՝ այսուհետև զորքեր չմտցնել Լեռնային Ղարաբաղի սահմաննե-  
րը, այլ չեզոք խորհրդային հանձնաժողով գործադրել այնտեղ, որպեսզի  
իմանա հեղափոխական գյուղացիության կամքը և, այդ կամքի համաձայն,  
լուծել Ղարաբաղյան հարցը: Խնդրում ենք պատասխանել:

Եթե անհրաժեշտ եք համարում, ինչպես ենք ժամ նշանակել ուղիվ  
գնով բանակցությունների համար:

Ղարաբաղյան հայ հայրենակցության ներկայացուցիչներ Փիրումով և  
Երզնկյան:

Հովելված № 8

Հունիսի 29, 1920թ.

ՈՆՎ. ԼԵՆԻՆԻՆ

Սեմարգո Վաղիմիլ Բյիչ:

Նախիջևանի մոտ թուրքական զորամասերի երևալու մասին Սդիվա  
Կիի հեռագիրը չի պարզում՝ արդյոք կտրուկ շրջադարձ կա՞ փոքրասիա-  
կան թուրք ազգայնականների ամբողջ քաղաքականության մեջ, թե՞ դա  
առանձին ջոկատի գործողություն է, որը իր սեփական քաղաքականու-  
թյունն է վարում Փոքր Ասիայում ընդհանուր կազմալուծվածության հետե-  
վանքով և լսել է մեր դեմ ուղղված մուսուլման-մուսավաթիստների շարժ-  
ման մասին, որոնց նրանք օգնության են շտապում: Բոլոր դեպքերում չի  
կարելի կասկածել, որ դրանում մեծ դեր են խաղացել մուսուլմանների  
ապստամբական շարժումներն Աղբեջանում: Եթե առկա է իրական շճ  
քաղաքա՞ թուրք թեմալականների քաղաքականության մեջ, դրան անկաս-  
կած նպաստել են անվերջ քաջքույները թուրքերի հետ մեր բանակցու-  
թյուններում և մեր ներկայացուցչության Անգորա մեկնելու մշտական հե-  
տաձգումները: Բոլոր դեպքերում, կասկած չկա, որ մեծ դեր է խաղացել  
Աղբեջանում զարգացում ստացած պայքարը խորհրդային իշխանության  
դեմ և ֆանատիկ մուսուլմանների ուժեղ շարժումը Խորհրդային Բաքվի  
պրոլետարիատի դեմ: Այդ շարժումը պետք է ծակատագրական կերպով  
հաջորդի Բաքվում Խորհրդային Հանրապետության հոչակմանը: Կոմու-

նիստական միջոցառումները, ընդ որում, ըստ երևույթին, չափազանց հապճեպ և անտակտ կերպով մտցված, չէին կարող չվանել մուսուլմաններ ըի մանրործուական մասային, օրինակ՝ Բաքվի մանր խանութայանն ըի մասային: Եւրջ արունահեղույթներ են կատարվել: Մեր գործա սերի կողմից մուսուլմանների գանգվածային ջարդը Ելիզավետապոլում, անկասկած, նպաստել է կոտորածի խոր սրմանը մուսուլմանների զգալի մասի և խորհրդային իշխանության միջև, որը շատերը դիտում են որ պես մոսկովյան հասարակ ներկայացուցչություն և անձամբ անբավարար է իրագեկ Ադրբեջանի ներքին քաղաքականությանը: Բայց նովկասցի գրուցակիցների պատմածներից են այն տպավորությունն են ստացել, թե այդ ներքին քաղաքականությունը եղել է զգալի չափով անզգույշ և վանել է մուսուլմանների զգալի մասին: Թուրքերի առաջխաղացումը Ադրբե ջանի ուղղությամբ, անկասկած, դրա հետ է կապված:

Գործերի նոր վիճակը պետք է անդրադառնա Անդրկովկասում մեր պլանների վրա և մեզ ստիպի էլ ուժելի գզուշուրեն վերաբերվել ընկ. ընկ. Օրջանի կիճեի, Ադրվանիի, Նարիմանովի և մրանների հարձակուտակաւ, պլաններին: Այս ընկերները սկզբնապես ձգտել են զենքը ձեռքներին խորհրդային կարգեր մտցնելուն և՛ Վրաստանում, և՛ Հայաստանում, և ծարաստիճան հիսպթափված էին. երբ մեր Կենտկոմը դա մերժեց: Մինչև օրս ընկ. Նարիմանովն իր հեռագրերում վերադառնում է Վրաս տանն ու Հայաստանը անհույսալ խորհրդանշաններու Իսր անհրաժեշտա թյան մտքին: Երբ բաքվեցի ընկերներին հարկ եղավ այդ պլանից հրա ժարվել, նրանց մոտ, այնուամենայնիվ, պահպանվեց Վրաստանի ու Հա յաստանի դեմ հարձակողական գործողությունների տակտիկան: Մեզ հարկ եղավ շատ էներգիա ծախսել համարյա ամենօրյա միջամտության վրա՝ նպատակ ունենալով մեր ընկերներին հետ պահել հարձակողական գործողություններից: Այդ բախման վերջին փուլն է Խանդանուտում Ալլար լեջանի կողմից այն հակալական օկուպաների նկատմամբ պետականների հայտարարումը, որոնք մշտապես պատկանում են Հայաստանին և փաս տորեն գտնվում են Հայկական Հանրապետության ձեռքին: Ադրբեջանա կան կառավարությունը պահանջ է հայտնել Ղարսբաղի, Ջանգեզուրի և Ծալթուրո-Պարազգլազի գավառի նկատմամբ՝ Նախիջևանի, Օրդուբադի և Ջուլֆայի հետ միասին: Այդ վայրերի մեծ մասը փաստորեն գտնվում է Հայկական Հանրապետության ձեռքին: Երկուսից մեկը Կամ Ադրբե ջանը այդ վայրերը խլելու համար իր մուսուլմանական զորամասերն ու դարկել է այն նույն ասկյարների դեմ, որոնք ապստամբում են խորհրդա յին իշխանության դեմ: Թաթարական զորամասերը հայրի դեմ ուղար կելը բացարձակապես անընդունելի է և մեծագույն հանցագործություն կլինելու: Այն առավել ևս անթույլատրելի է այժմ, երբ հենց այդ վարգերի վրա հարավից հարձակվում են թուրքերը, որոնց խնդույն ձեռք կանկնեն արդրբեջանական մուսուլմանական զորամասերը, եթե նրանք այնտեղ ուղարկվեն: Ընդհանրապես այդ զորամասերի մասին հարցը ինձ թվում է բավականին դժվարին: Նրանք արդեն ապստամբություններ են բարձրացնում, և թուրքերի մոտենալը նրանց մեջ էլ-ավելի կուժեղացնի

այդ միտումը: Ամենից լավը կլինել նրանց ուղարկել Պալսկաստան, բայց ես անբավարար եմ իրագեկ իմանալու համար՝ արդյո՞ք դա իրագոր ժելի է ներկա պահին: Համենայն դեպս, խոսք անգամ լինել չի կարող արդրբեջանական ասկյարների հայրի դեմ ուղարկելու մասին՝ վերջինս յից այն մարզերը, որոնք նկատմամբ Ադրբեջանի ինքնին փչել է պահանջ ներկայացնել, խլելու համար:

Ադրբեջանին բավարարելու մյուս ուղին, հիշատակված բոլոր վայրե ըը մեր զորամասերի կողմից գրավելը՝ դրանք որպես նվեր Ադրբեջանին հանձնելու համար: Հենց այդ կոմբինացիան նկատի ունի Նարիմանովը: Այնտեղից եկած ընկերներն առում են, որ նկատի է ունեցվել մուսուլմանա կան ասկյարներին թիկունք հետ քաշել: Բաքվի խորհրդային կառավարու թյունը, որը ներքին քաղաքականությունը հանգեցրել է մուսուլմանաւալ, գանգվածների զգալի մասի հետ կտրուկ բախման, ցանկանում է փոխհա տուցում ստեղծել և ազգայնականորեն տրամադրված տարրերին կաշառել Ադրբեջանի համար այն վայրերի ձեռքբերումով, որոնք նա վիճելի է հուշարարում: Այդ կոմբինացիան ռուսաստանյան զորամասերի ձեռքով կատարելը բոլորովին անթույլատրելի է: Մեր դերը պետք է լինի բացար ձակապես օբլեկտիվ և խստիվ անաշատ: Արևելքում մեր ամբողջ քաղաքա կանոնության համար ծակուտագրական սխալ կլինել, եթե մենք սկսեինք մեկ ազգային տարրի վրա բազավորվել մյուս ազգային տարրի դեմ: Հա յաստանից որևէ մասեր խլել և մեր ձեռքով դրանք հանձնել Ադրբեջանին՝ դա կնշանակել կատարելապես կեղծ կոյուրիտ հաղոյոց: Արևելքում մեր ամբողջ քաղաքականությանը: Պա կխախտեր մեր քաղաքականություն մասին պատկերացումը՝ որպես գոտ անշահախնդիր և օբլեկտիվ քաղա րակականություն: Մասնավորապես Հայաստանի վերաբերյալ դա երկար ժա մանակով անուղղելի հարված կհասցնելու կոմունիզմի գործին: Հենց այդ պատճառով որոշում է ընդունվել վիճելի վայրերը գրավել ռուսաստան յան զորամասերի կողմից՝ դրանք ենթարկելով ռուսաստանյան օնտաա դիոն իշխանությանը այն հաշվով, որպեսզի այդ վայրերը հետագայում ոչ Իրբեջանին, ոչ Հայաստանին չչնորհվեն մի չն այն պահից, երբ բա րենպատտ քաղաքական իրադարձություն վրա կհասնի և կհաջողվի խա րող և բոլորի համար գոհացուցիչ ելք գտնել: Ռուսաստանյան զորքերի կողմից այդ վայրերի ժամանակավոր գրավումը պետք է նպաստի ինչպես հայրի, այնպես էլ մուսուլմանների հանդարտեցմանը: Մինչև օրս, սա կույն, մեր զորամասերի կողմից գրավված են միայն Ծուլին և Ջարբայիլը, իսկ այսպես կոչված վիճելի վայրերի ստավել մեծ մասը գտնվում է Հա րկական Հանրապետության ձեռքին: Թուրքերի հարձակվելը մեզ ստիպում է հրամարվել այդ պլանի հետագա անցկացումից: Հանրապետության Հեղ ուազմխորհուրդը կտրականապես հայտարարում է այնտեղ մեր զորքերի կողմից որևէ նոր վայրի գրավման անհնարինության մասին: Թուրքական վրամուզը մեզ ստիպում է սահմանափակվել սյուդեն ունեցածների պաշտ արությունամբ, նկատի ունենալով գլխավորապես Բաքվի պաշտպանություն ր: Մեր ուժերն այնտեղ անբավարար են, որպեսզի նոր վայրեր գրամել է առաջանալ դեպի Հայաստանի խորքը: Եվ այսպես, պարզ է, որ մենք

ստիպված ենք սահմանափակել: արդեն մեր կողմից գրավված վայրերի օկուպացմամբ և հրաժարվել Հայաստանի որևէ նոր մասեր գրավելուց, թե կուզ և որպես վիճելի նշվողները:

Հայաստանի իշխանություն տակ գտնվող վայրերի օկուպացումից ձեռնպահ մնալը կորուստի վերջինիս հետ պայմանագրի կնքումը: Հուլիսյան պատվիրակությունը ոչ մի կերպ չի ցանկացել ռուսաստանյան օկուպացման հանձնել Հայաստանի իշխանություն տակ գտնվող վայրերը, բացի Ղարաբաղի օկուպացից: Միայն ռազմական ստատուս բնույթի հիման վրա կարելի է Հայաստանի հետ պայմանագրի հույս ունենալ, որն անհրաժեշտ է հանուն Անդրկովկասում մեր խաղաղ քաղաքականության անցկացման: Եվ այսպես, ամեն ինչ խոսում է այն բանի օգտին, որ մենք պետք է հրաժարվենք այնտեղ որևէ ուրիշ վայրեր գրավելուց, բացի այդպես գրավվածներից: Հայկական Հանրապետության հետ մենք պետք է ձգտենք հնարավորին չափ շուտ պայմանագիր կնքել: Հետագա օկուպացումից ձեռքն պահ մնալը չի վերացնում նրա կնքման ծանապարհիկն եղած բոլոր խոչընդոտները, քանի որ հայկական պատվիրակությունը ձգտում է այն բանին, որպեսզի մենք որոշենք, թե որտեղով է անցնում սահմանը Հայաստանի և Ադրբեջանի միջև, ինչը մեզ համար կնշանակեր այնտեղ ամեն մի վայր անհավաղ կամ Ադրբեջանին կամ Հայաստանին զիջելու անհրաժեշտություն: Մենք հիմա դա անել չենք կարող, մեծագույն վնաս չհասցնելով կամ մեկի, կամ էլ մյուսի հանդեպ մեր քաղաքականությանը: Այդ պատճառով մեզ հարկ լինի ամեն կերպ պատճառաբանելով, հրաժարվել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանը որոշելու պարտականություններից:

Թուրքիայի վերաբերյալ դրությունը պարզվում է, որ էլ ավելի բարդ է: Այնինչ մենք նույնիսկ չգիտենք, թե ինչ է թաքցնված թուրքական գոյրեյի այն տեղաշարժերի տակ, որոնց մասին հուղորդում է Մոլդավիան: Այս գործողությունների կարծիքով, թուրքերին զենք տալու մասին հարցը վերջ նակաստպես լուծելու համար պետք է սպասել ընկ. Էլիավայի Անգորայից գալու և նրանից առաջին տեղեկություններն ստանալուն: Միայն անմիջակայքում մեր ներկայացուցչի միջոցով մեզ համար հնարավոր կլինի բավարար չափով պարզել դրությունը, որպեսզի որոշում ընդունել այն մասին, թե կա՞րող ենք արդյուք կատարել թուրքերին զենք տալու մեր խոստումը, թե՛ այդ զենքը ուղղակի կամ անուղղակի կերպով պալեստինյան մեջ կմտնի մեր դեմ: Ծառ հնարավոր է, որ շրջադարձը մեր դեմ, եթե այդպիսին իրոք կա, առաջացրել է հենց Մոսկվայի օգնությունից հրաժարվելու թուրքերը: Այդ ամենը ստույգ պարզել կարելի է միայն այն ժամանակ, երբ Անգորայից գրի Էլիավան: Ներկայումս անհրաժեշտ է արագացնել նրա մեկնումը: Ճիշտ այդպես էլ չպետք է ուշացնել ընկ. Լեգրանի մեկնումը: Այդ ընկերները կզննեն Անգորայում և Էրիվանում տիրող իրադրությունը, և այն ժամանակ մենք որոշում կընդունենք իրադրության իրական իմացության հիման վրա: Ներկա պահին գլխավոր է՝ համենվ մեր ներկայացուցիչների հնարավորին չափ շուտ գալուն:

**Կոմունիստական ողջուխով՝ Չիչերին:**  
(Փ. ՄԿ ԿՄԸՍ, Օձանն օձեմ, 6-ի սեկտոր ձ. 44-32/3-ա, ձ-34-58).

**Գորխի գավառային հեղկոմին գրած՝ Ղարաբաղի նահանգային հեղկոմ Ասադ Կարանի նամակ-իրահանգներից.**

— 1920 թվականի հուլիսի 19-ի թվագրությամբ.

«Մորապես սխալ է եղել ձեր հին քաղաքականությունը, այսինքն՝ գոյրեյի կողմից Ղարաբաղի և Ջուղեզուրի գրավումը: Մենք գիտենք, որ մեր գործերը շահաշահված են և նահանջել են, իսկ այսօր գորբերի փոխարեն մեր փողերը հրաջքներ են գործում: Նորից ու նորից կրկնում են իմ խորհուրդը՝ ոչ մի գումար չխնայել, ավելացրեք ռոժիկը, տվեք պստակներ և այն ամենը, ինչ նրանք ուզում են: Կառավարությունը որոշում է կա բացել Ղարաբաղը և Ջուղեզուրը Ադրբեջանին միացնելու համար՝ բաց թողնել 200 միլիոն ռուբլի»:

— 1920 թվականի հուլիսի 21-ի թվագրությամբ.

«Մինչև օրս դեռևս չի գինաթափված Ջուղեզուրի գոյրեյի 90 տոկոսը: Դա ցավալի է: Բայց առավել ցավալի է այն, որ մինչև օրս չի գլխատված Ջուղեզուրի հայությունը: Նրա մտավորականությունը և ռազմական պարագլուխները մինչև օրս մնում են գոյրեյում: Աշխատեցեք, որպեսզի բոլոր նշանավոր և պիտանի հայերը ձերբակալված լինեն... Թողեք մարդասիրությունը: Դրանով չի կարելի պետություն ստեղծել, երկրներ նվաճել... Ռազմիկներով հարուստ հայտնի տեղերում, հայերին թուլացնելու նպատակով, սպանեցեք մի ուս ռազմիկի և դրա մեջ մեղադրեցեք հայերին: Գիտե՞ք, թե (Նրանց) ինչ կանեն ռուսները: Ջուղեզուրում ոչ օրինակ վոր մարդ թողեցեք, ոչ հարստություն, որպեսզի այդ անիժյալ ցեղը (հայերը) այլևս ոտքի կանգնել չկարողանան»:

(ՄԱԿ ԿՄԸՍ, ֆ. 64, օտ 1, ձ. 10, ձ. 9-10)

**ՌՈՐԸՐՈՎԱՅԻՆ ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԵՂԿՈՄԻ  
ՀԵՂԱԳԻՐԸ ՌՈՐԸՐՈՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԿՈՄԻՆ**

Բուլբրին, բոլորին, բոլորին

Ադրբեջանի Ռորիդուրին Առցիախատական Հանրապետության անուրից հայ ժողովրդին հայտարարեցեք Ադրբեջանի Հեղկոմի նույնների 30-ի որոշումը.

«Ադրբեջանի բանվորազորագրական կառավարությունը, ստանալով Հայաստանում ապստամբ գրուպացիության անունից Ռորիդուրային Առցիախատական Հանրապետության հռչակման մասին հաղորդագրությունը, որոշում է եղբայրական ժողովրդի հարջանակը. Այսօրվանից Հայաստանի



և Ադրբեջանի միջև նախկին սահմանները չեղյալ են հայտարարվում: Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը ճանաչվում են որպես Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մասը:

Կեցցե՛ Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի բանվորների և գյուղացիների եղբայրությունն ու միությունը:

Ադրբեջանի Հեղկոմի նախագահ **Ն. ՆԱՐԻՄԱՆՈՎ**

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար **Մ. ՀՅՈՒՍԵՅՆՈՎ**

30 նոյեմբերի 1920թ.

*Կամուխատ» թերթ, Երևան, նոյեմբերի 7 զինվածների 1920թ.*

Հավելված № 11

**ՌՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԵՂՎՈՍԻ ՀՈՉԱԿԱԳՌԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՐՀՐԴԱՅԻՆ ԻԾՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

1 դեկտեմբերի, 1920թ.

Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը ուղտախոսության խոր զգացումով ողջունում է այն հերոսական ջանքերը, որ տվյալ պահին ցուցաբերում է աշխատավոր հայ ժողովուրդը դաշնակցական կառավարության ատելի լծի դեմ պայքարում, որը ավելի քան 2 տարում Հայաստանը հասցրել է լրիվ ջղջայման ու հուսահատության:

Պաշնակների տիրապետության շրջանը՝ դա «արյունալի վաթխանալի ալի», ազգամիջյան սպանողի շրջան է, որի ժամանակ արյունաքամ են եղել հայ և մուսուլման ժողովուրդները: Մուսավաթի և դաշնակների կառավարությունները, ծախվելով Անտանտային, վերջինիս ձեռքին կույր գեներան դարձրել ժողովուրդներին և իրենց ինպերիալիստական տենչանքների մեջ մի ժողովրդին իրադրել են մյուսի դեմ, ստեղծելով դուրսբաղյան, Նախիջևանյան, գանգեզուրյան և այլ տարածքային հարցեր, որոնք չէին կարող լուծվել դաշնակցական-մուսավաթական ռեակցիայի ջանքերով:

Հայրենասիրտ ավերված քաղաքներ ու գյուղեր, տանկակու հուրբուր հազարավոր մերկ ու քաղցած, իրենց հարազատ օջախներից զրկված մարդիկ, անա կենդանի վկաները ոչ հեռու անցյալի, որը ցույց է տալիս, ու մի խումբ ավանտյուրիստներ, համաշխարհային բուրժուազիայի լակեյներ, իրենց անձնական շահերի համար սովի, ցրտի ու մահվան են դատապարտել տանկակ և հայրենի հազարավոր մարդկանց:

Խորհրդային Ադրբեջանը, ընդունաջ գնալով եղբայրական հայ աշխատավոր ժողովրդի պայքարին՝ ընդդեմ դաշնակների իշխանության, որոնք մեր լավագույն կոմունիստ ընկերների արյունն են թափել ու թափում են Հայաստանում ու Ջանգեզուրում, հայտարարում է, որ այսուհետև տարածքային ոչ մի հարց չի կարող դառնալ երկու դարավոր հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների փոխադարձ արյունահեղության պատճառ, Ջանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքները հանդիսանում են Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը, իսկ Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը ինքնորոշման լրիվ իրավունք է տրվում, թողյալ բազմական գործողությունները Ջանգեզուրի սահմաններում դադարեցվում են, իսկ Խորհրդային Ադրբեջանի գրքերը դուրս են բերվում:

Բացի դրանից, Խորհրդային Ադրբեջանը իր դավաանները Խորհրդային Հայաստանի առաջ լայնորեն բացում է դեպի անհատում հայաստանները՝ նավթը, կերտսինը և մյուս պրոդուկտները, որոնք ունի Խորհրդային Ադրբեջանը:

Այդ հարստությունները, որոնք ստանում էին համաշխարհային իմպերիալիզմի գիշատիչները, հատուն որոնց արյունալի օրգաններ էին սարգվում Անդրկովկասի տարածքում, այսուհետև դառնում են Ռուսաստանի, Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի սեփականությունը, որոնք, համախմբվելով կուռ շարքերի մեջ, կընթանան դեպի համաշխարհային կապիտալի վերջնական ջախջախում:

Ադրբեջանի Հեղկոմի նախագահ՝ **Ն. ՆԱՐԻՄԱՆՈՎ**

*Կամուխատ» թերթ, Երևան, նոյեմբերի 2 զինվածների 1920թ.*

В сборнике «Великая Октябрьская Социалистическая революция и победа Советской власти в Армении», Ереван, 1957 г. 437-438.

Հավելված № 12

**ՈՎ(Բ) ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՎԵՅՈՒՐՈՅԻ ՊԵՆՏՈՆԻ ՆՍՍՏԻ  
Հայ ժողովրդի դեմոկրատական, ազգային-ազատագրական պայքարին Բաբուն հովադրել է ջարդերի ու արյունահեղությունների, տնտեսական բռնադատման քաղաքականություն: Ադրբեջանում տեղի ունեցած հայերի ծար ջարդերը համառորեն թացցնելու և ժխտելու ճիգերը, որ այնպիսի ե- ուսուղով թափեցին իրավապահ մարմինները, դրանց քաղաքական գնահա տական տուլուց կենտրոնական իշխանությունների ամեն կերպ խուսափե լը, ջարդարյուններին արժանի պատիժ չտալը՝ երկրով մեկ խրախուսեցին բռնությունը: Ամեն ինչ տրվում է, որպեսզի հայ ժողովրդի ազդարուցի ոլ, մոկուտական շարժումը խորհրդային և համաշխարհային հանրությանը ներկայացվի իբրև վերակուտուցման քաղաքականության դեմ ուղղված պայքար: Իշխանությունները համուճաբար կարծում են, թե Նորիդային

Հայաստանի աշխարհագրական-քաղաքական վիճակի պատճառով հայ ժո ղովուրդը ուրիշ ելք չունի, քան գրվա խոնարհել բռնության առջև, տեղի տալ գինվորական ճնշումներին, անտրտունջ տանել բոլոր հարվածները, հաշվել սզգային արժանապատվության ոտնահարման իրողության հետ: Հարկ է հիշեցնել, որ ռեզիմում տեղծված արդի իրավիճակը ուղղակի հետևանք է 1921 թվականին հայ ժողովրդի թիկունքում կնքված ռուս- թուրքական կողպուշական պայմանագրի և ՌԿ(բ)Կ Կովկասյան բուրու լի անօրինական սուղջման, որոնցով մասնատվեց Հայաստանի Հանրապե տությունը, իսկ հայ ժողովրդից խլվեց նրա պատմական տարածքի ամեկի քան 80 տոկոսը: Ջուր են հայ ժողովրդի կամքը բռնությամբ կտրելու հու սերը: Նա այլևս երբեք չի հաշտվի այն անագորույն վիճակի հետ, որի մեջ հայտնվել է ինքը, չի հաշտվի գաղութային ծնշման ու կեղեքման հետ:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, արտահայտելով Նորիդային Հայաստանի և Արցախի ժողովրդի միահամուտ կամքը, դիմում է ԽՍՀՄ պրեզիդենտին:

1. Վերացնել արտակարգ դրությունը Լեռնային Ղարաբաղում: ՆԳՍ ներքին գոյքերի ստորաբաժանումները դուրս բերել ԼՂԻՄ-ի տարածքից՝ դրանք տեղաբաշխելով մարզի և Ադրբեջանական ԽՍՀ հարսկից շրջան ների դեմարկացիոն գոտիներում:

2. Իրագործել Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշումը մարզի խորհրդային մարմինների լիազորությունների վերականգնման մասին:

3. Անհապաղ չեղյալ հայտարարել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1990 թվականի ապրիլի 21-ի հակասահմանա դրական, քստ ետության առդրիչ հրամանագիրը, որի նպատակն է փոխել Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական իրողությունը, փծեցնել մար գի հայ բնակչության ինքնորոշման իրավունքի կենսագործումը: Վերաց- նել ադրբեջանական կողմի՝ մինչև այժմ թույլ տված ապօրինի գոյծողու- թյունների հետևանքները:

4. Ի կատարումն Լեռնային Ղարաբաղի շրջափակումը վերացնելու մասին ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների երկրորդ համագումարի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մի շարք որոշումների՝ ապահովել մարզի և Հայկական ԽՍՀ-ի ազատ հալոդրականությունը Գորիս—Լուչին—Ստեփանա կերտ ճանապարհով, կանխելու համար ճանապարհի բացմանն ուղղվելիք հնարավոր հարկադրական, անցանկալի գործողություննորը:

5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ամենայն վճռականությամբ կրկին ընդգծում է, որ ԼՂԻՄ-ի և հարսկից հայկական Շահումյանի շրջա նի և Գետաշենի ենթաշրջանի սրբաբեճի լուծման հիմքը ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի կենսագործումն է՝ երկրի տանանադրության և միջազգային իրավունքի նույնաներին համապատասխան:

6. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը իր վճռական բողոքն է հայտնում, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը շարունակում է անտեսել օս-

մանյան կալուրդային մեջ հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը, մի բան, որ ս. թ. ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրը Ստեփանակերտում հանգեցրեց հակաօրինակուն նոր գոյծողությունների, որոնք պատահալովեցին սգու միտինգի մասնակիցների նկատմամբ գորքի կողմից գործադրված բռնություններով, հալ ժողովրդի մեծ վշտի օրը նրա ազգային արժանապատվությունը ոտնահարելու նպ. դրսևարումներով:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հայտարարում է, որ երկրի և սփյուռքի ողջ հալ ժողովուրդը լի է վճռականությամբ տեղ կանգնելու իր ազգային իրավունքներին, պաշտպանելու իր պատիվն ու արժանապատվությունը, մինչև վերջ պսպարելու Լեռնային Ղարաբաղի ինքնուրուշման իրավունքի կենսագործման համար:

Սույն դիմումից բխող միջոցառումները չիրականացնելու դեպքում իրավիճակի հետագա բուգրացման ողջ պատասխանատվությունը կրնկնի կենտրոնական իշխանությունների և անձամբ ԽՍՀՄ պրեզիդենտի վրա:

**Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝  
Հ. ՈՍԿԱՆՅԱՆ**

**Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝  
Ն. ԱՏԵՓԱՆՅԱՆ**

**3 մայիսի 1990 թվականի, քաղ. երևան**

*«Խորհրդային Հայաստան», № 101, 3 մայիսի, 1990թ.*

Հավելված № 59

### **ԱՐՄԱՅԱՆ ԶԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԽՄԿԿ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՊԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Մեր ժողովրդական շարժումը լույս սփռեց մի ամբողջ շարք բարդ պրոբլեմների վրա, որոնց վերլուծությունը կարևոր է մեր առաջադրած նպատակներին հասնելու, ինչպես նաև խորհրդային պետություն ազգային շիշտ քաղաքականությունը ձևավորելու համար:

Մի երկրում, որտեղ ապրում է ազգերի և ազգությունների հակադրան ամբողջություն, ազգային հարցի լուծումը չի կարող լինել ոչ դուրյին գործ և ոչ էլ այրազ լուծվող պրոբլեմ: Եվ դա այն պայմանով, որ ազգային քաղաքականությունը տարվում է գիտակցություն: Իմնակովիված, ուշադրությամբ և գզուշությամբ: Ավելի մեր պատմությունը գնաց այլ ուղիով, գործնական նոս պրոբլեմները ոչ այնքան լուծվել են, որքան մոցվել հուսարական օրգանիզմի մեջ: Դրանց «լուծման» համարյա գլխավոր եղանակը դարձան ռեպրեսիաներն ու լուրջան մատնումը: Արցախցիները այդ լավ գիտեն անցած 30-ամյակից: Իրարուրությունը սաստկանում էր տեսելուն լուրջ հե տազոտությունները բուցահայտ ջատագովական, այնքան բովանդակագույկ, որքան ուռձեցված կատուցվածքներով նենգափոխելու միջոցով: Եվ

դա հասկանալի է: չէ՞ որ լավ տեսությունը երևան է գալիս այն ժանանակ, երբ գործող սոցիալ-քաղաքական ուժերը գզում են դրա կայիքը: Իսկ այն էլ հենց չկար: Արդյունքում երբեմնի քողարկված ամենատար պրոբլեմները մակերես ելան, և ի հայտ բերվեց դրանց լուծման հին մեթոդների լրիվ անպիտանիությունը: Ըմբռնելով այդ հանգամանքները, կուսակցության ու պետության ղեկավարությունը ձգտում է մշակել ազգային քաղաքական Լուրջան նոր սկզբունքներ, որը սյուտացվեց ԽՄԿԿ ծրագրի նախագծում: Այս հողվածում ես կփորձեմ տալ դարուբարյան պրոբլեմի և անցած մեկուկես տարում մեր շարժման նկատմամբ կենտրոնի վերաբերմունքի վերլուծությունը:

Ղարաբաղյան պրոբլեմը ծագել է Ադրբեջանի կազմի մեջ Այրցախի ավտորիտուշ մոցման հետևանքով: Այն, ինչը չէս հուշողվում ուժով կա տարել դարերի ընթացքում, արվեց խորհրդային իշխանության քողի տակ:

Այվել է ամեն հնարավորը, որպեսզի Ղարաբաղի Էկոնոմիկան դառնա ինքնուրույն գուրության համար անընդունակ կցող: Զամվել է այն ամենը, ինչը կարելի է քամել: Այդ մասին լավ է ասել Հ. Ա. Պողոսյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թվականի հուլիսի 13-ի նիստում: Սոցիալական պլանում կատարվում էր ամենանվազագույնը: Տարվում էր մարդի ադրբեջանացման ուժեղացված քաղաքականություն, այն քան հաշող նախիջնանում և պսկաս հաշող՝ մեզ լուտ: Զաղաքական պլանում աստիճանաբայ վերացվում էին ինքնավարության Լույսիսկ սիմվոլիկ նշանները, առանցքային պոստերում նշանակվում էին խաղաղիկները: Պատենա-ճարտարուպետական հուշարձանների նկատմամբ վերաբեր մունքը, որոնց հանդեպ Ջիա Բունիաթովը իր բարեկամների հետ միասին ալսօր մեծ սիրտ կրակով է վառվել, այլ կերպ, քան բուխարտասկան, չի կարելի համարել: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ հույերը Բաքվում նման քաղաքականության միակ օբլեկտը չեն եղել: «Ապիտուկ» ցեղա սպանությանը ենթարկվում էին գործնականում բոլոր հիմնաբնակ փոքրս մասնությունները՝ քողերը, ուղիները, թալիշները: Ադրբեջանը միակ միու թենական հանրապետությունն է, որտեղ տուսնանակների ընթացքում կքր ծատվել է ոչ ադրբեջանական բնակչությունը, ըստ որում ոչ միայն հարա բերական, այլև բացարձակ պլանում: Այդ քաղաքականության տրամաբա նական ավարտը, հարազատ ծնունդը դարձան Սումգայիթում, բուն ԼՂԻՄ-ում, Ադրբեջանի մրա շրջաններում տեղ գտած զազանությունները, որքան էլ որանցից խաաափի Բաքվի ղեկավարությունը:

Այս ամենը թույլ է տալիս մեր շարժումը որակել որպես իր բնույթով ազգային-ազատագրական և շարժիչ ուժերով ժողովրդական: Այս բնորոշումը իր ամբողջ ակնհայտությամբ հանդերձ, չափազանց կարևոր է հետևել լավ պատճառներով: Նախ, ազգային-ազատագրական շարժումը իր եուրությամբ միշտ ուղղված է ոչ թե ուրիշ ժողովրդի դեմ, այլ պետական որոշա կի կառուցվածքների և դրանց վարած քաղաքականության դեմ: Այլ կերպ ասած, պրոբլեմը իր հիմնում հանգում է ոչ թե հալ և ադրբեջանական ժողովուրդների փոխհարաբեություններին, այլ Այրցախի ժողովրդի և հանրա



այստական քաղաքական իշխանության համակարգի փոխհարաբերություններին: Երկրորդ, արդի պայմաններում ազգային-ազատագրական շարժումը նաև սոցիալ-քաղաքական պրոբլեմների լայն կոմպլեքսի լուծման միջոց է ծառայում: Հենց դա էին ջանում թուլացնել:

Ահա թե ինչպես է ԽՄԿԿ Կենտկոմը որակել մեր շարժումը՝ ՏԱՍԻ առաջին հաղորդագրության մեջ. «Վերջին օրերս Ադրբեջանական ԽՍՀ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում տեղի են գտել հալ բնակչության մասի ելույթներ՝ Լեոնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ կողմի մեջ մտցնելու պահանջներով: Ժայռահեղույուն տրամադրված առանձին ունձանց անպատասխանատու կոչերի հետևանքով հրահրվել են հասարակական կարգ ու կանոնի խախտումներ:

Քննարկելով Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում տեղի ունեցող իրադարձությունների մասին ինֆորմացիան, ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեմ է. որ գոյություն ունեցող ազգային-տերիտորիալ կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողություններն ու պահանջները հակասում են Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ աշխատավորների շահերին, վնաս են հասցնում ազգամիջյան հարաբերություններին:

Հետևողականորեն ղեկավարվելով ազգային քաղաքականություն լեոնային սկզբունքներով, ԽՄԿԿ Կենտկոմը դիմել է հսգ և ադրբեջանական բնակչության հարեմասիրական ու ինտերնացիոնալիստական զգացումներին, կոչ անելով չճանաչելի նացիոնալիստական տարրերի պրովոկացիաներին, ըստ ամենայնի ամրապնդել սոցիալիզմի մեծ հարստությունը՝ խորհրդային ժողովուրդների եղբայրական բարեկամությունը»:

Թող ինձ ներվի երկար մեջբերումը, այն արժանի է դրան:

Նման մոտեցման հետևանքները հայտնի են բոլորին: Չէ՞ որ ձեռնարկվեց պրոբլեմի քաղաքական եզրերում մանրակրկիտ կերպով քողարկելու, այն որպես հայերի ու ադրբեջանցիների միջև պրոբլեմի կոնֆլիկտ ներկայացնելու փորձ: Իբրև տեղ ունի ոչ թե Բաքվի քաղաքականության դեմ բողոք, այլ հայ «ազգայնամուլների և ծայրահեղականների» պրովոկացիաներ՝ հանուն ինչ-որ «պոստոր ջրում ձուկ որսալու» տիպի մշուշապատ նպատակների: Այս թեմայով հետագա իրապարակումները ցույց տվին, որ «առաջին քիճեռումը» պատահական չէր, Ազգամիջյան կոնֆլիկտ բուրբուքն ու մեջ մեղադրանքներից բացի, թերթերի էջերը լցվում էին ժողովուրդների բարեկամության մասին կոչերով: Հակապրոպագանդայի տեսության և պրակտիկայի մեջ ուղի պրոբլեմը՝ կեղծ թեզը, դրական օրինակով ամրապնդումը, լավ է հայտնի:

Արդյունքում մենք ունենք այն, ինչ ունենք: Ընդհուպ մինչև անցյալ տարվա սեպտեմբերը մենք զբաղվածություն ենք պոստանել, ուր զգույն չափով խառնել է կրակի հետ խաղացող քաղաքական ստրատեգիայի խղաքարտերը: Նրանց ջանքերը հաջողությամբ պատկվեցին սեպտեմբերի 19-ից հետո, երբ երկու կողմերը ակտիվորեն ներքաշվեցին ազգամիջյան

կոնֆլիկտի մեջ, որը երկրորդ պլան մղեց կենտրոնական քաղաքական պրոբլեմը:

Բայց և այնպես ինչու՞ հարկ եղավ քողարկել պրոբլեմը «ըստ ուղղախայացի» (ԼՂԻՄ—հանրապետություն—կենտրոն) և շեշտը դնել «հորիզոնականի» վրա (հայեր—ադրբեջանցիներ): Ի՞նչ է սա: Անիրավասության հետևանք, գոյժի ետևից մեջ կողմնորոշվելու «նկարողություն»: Հազիվ թե տվյալ գործոնը վճռորոշ լինի, հատկապես եթե հաշվի առնվի, որ կենտրոնական մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության կողմից ձեռնարկված աննախադեպ դեգրեֆորմացիայի կամպանիան բացահայտորեն պայանավորվել է կառավարվել է նույն կենտրոնից:

Փորձենք պատասխանել հարցին, քանի որ այն ավելի եական է: Հալաստանի հետ Արցախի վերամիավորումն դեմ ինչպիսի՞, սղապս ասած, պաշտոնական փաստարկներ են ուտաջ քաշվել: Ես հաշվել եմ հինգը:

1. Լեոնային Ղարաբաղի պրոբլեմի լուծումը վտանգավոր նախադեպ կդառնա, քանի որ նման պրոբլեմներ շատ կան երկրում: Մինչդեռ «վերա կառուցումը վերածնունդ չէ», մեկը մյուսի հետ անհամատեղելի է:

2. Հայաստանի հետ Լեոնային Ղարաբաղի վերամիավորումը կջալքի Ադրբեջանի մյուս շրջանների հետ ռեգիոնի սովանդական տնտեսական կապերը, տնտեսական խառնաշփոթություն և քառա կուռուջացնի:

3. Քանի որ Ադրբեջանի ղեկավարությունը դեմ է վերամիավորմանը (որանում ոչ ոք երբեք էլ չի կապակցել), անհնարին է լուծել պրոբլեմը, որովհետև դա կհակասեր ԽՍՀՄ սահմանադրություն 78-րդ հոդվածին:

4. Այսպես կոչված «ադրբեջանական գործոնը», այսինքն ադրբեջանական բնակչության անկոնֆատեսելի, իսկ ավելի ճիշտ՝ միանգամայն կամխատեսելի արծագանքը Հայաստանի հետ Լեոնային Ղարաբաղի վերամիավորմանը:

5. Ընդհանրապես պրոբլեմը մտացածին է: Սոցիալիզմը՝ դա ժողովուրդների եղբայրական բարեկամություն է: Հարցը արհեստականորեն ուղեցնում են մաֆիոզ կլանները, որոնք փոխսպիևում են ազգայնամուլներին և ծայրահեղականներին վերջին թեգի բացահայտ անձարակության և վիրավորողականության պատճառով, որոնք ցունկանում են շեղել թնրն չական մարմինների ուշադրությունը ազգամիջյան լարվածության հողի վրա կուտարվող հունցագործությունների բացահայտումից և թուլացնել սեփական անազնիվ արարքները:

Այս հինգից բացի կա մեր շարժման նկատմամբ կենտրոնական ղեկավարության բացասական վերաբերմունքի պաշտոնապես չձևակերպված ևս մեկ պատճառ: Այն հանգում է հետևյալին. ԽՍՀՄ քաղաքական պատմության երկար տասնամյակների ընթացքում առաջին անգամ ներքևից, մի ամբողջ ժողովրդի կողմից «չարտոնված» ձևով բարձրացվեց քաղաքական խոշոր պրոբլեմ՝ դրանով իսկ դարաբաղցիները ոտնձգություն են արել

քաղաքացիական միջև այդ անասան: մենաշնորհի (տառաչարքի և լուծել քաղաքական հարցեր): վրա: Դա պետք է տեսնել և այդ մասին պետք է պարզ ասել: Ժողովուրդն առաջին անգամ հայտարարել է քաղաքական պրոցեսի սուբյեկտ լինելու իր իրավունքի մասին: Արցախցիները բարձրացրել են ժողովրդա-պետության առանցքային պրոբլեմը, թող նույնիսկ սկզբում չգիտակցելով այդ թող անցյալ տարվա փետրվարին մենք դեռ ինչպիսիք էինք, այլ ոչ թե պահանջում:

Քաղաքական վերափոխումները մեր երկրում, չնայած որանց անհետև փողկանությանը, ընթանում են բավական շոշափելի տեմպերով: Հարցի նման դրվածքը այսօր հազիվ որևէ մեկին զարմացնի: Սակայն մեկուկես տարի առաջ այլ էր իրադրությունը և դարաբաղցիների քաղաքական պահանջները չլսված հանդգնություն էին երևում: Ահա թե ինչու աղավաղվեցին մեր բարձրացրած պրոբլեմի ելությունը, մեր շարժման բնույթը, որը դեմոկրատական հզոր լիցք է կրում և բարձրացնում է մեր հասարակության դեմոկրատական վերափոխման առանցքային պրոբլեմները: Եվ ամեն ինչ առաջ՝ ժողովրդա-պետության մասին հարցը, որ բարձրացվեց հերթական անգամ, հիմա այդդեմ ժողովրդական ղեկավարատների համագումարում՝ ակադեմիկոս Ա. Դ. Սուխարովի կողմից:

Արդյոք կենտրոնի քաղաքականությունը հաջող էր ժողովրդի ու պետության շահերի տեսակետից: Արդյո՞ք որանց հասնելու համար ճիշտ առաջնություններ ու եղանակներ էին ընտրվել: Արդյո՞ք հաջողվեց հասնել ցանկալի նպատակների և խոստովել փետրվարին նախանշած ստրատեգիայի իրականացման շնորհիվ կանխատեսված բարդություններից: Փորձենք խորամուխ լինել դրանում:

1. Նախադեպի վտանգը: Այսպիսով, ենթադրվում էր, որ եթե դարաբաղցիների պահանջները բավարարվեն, ազգային մյուս խմբերը կպահանջեն նույնապիսի վեխափոխություններ: Եվ, ընդհակառակը, եթե մերժեն դարաբաղցիներին, հաստատականությունն դրսևորեն, ապա մյուս ղեկավարներում հանգստությունը չի խախտվի: Բայց ի՞նչ ստացվեց: Նման տրամաբանության լրիվ ձախողումը ակնհայտ է: Քաղաքական շարժումների և լարվածության թափանիվը պտտվում է երկրի շատ ղեկավարներում, ուժեղանում են կենտրոնախույզ միտումները, որոնք մեծ վտանգ են ներկայացնում վերակառուցման գործի համար: Այս ամենը օրինաչափ է: Զե՛ որ պետք է վախենալ ոչ թե նախադեպերից, այլ այն քաղաքականությունից որը չի ցանկանում ընկալել և լուծել օբյեկտիվորեն գոյություն ունեցող լուրջ պրոբլեմները:

2. Էկոնոմիկա: Այս փաստարկը նույնպես չի կարելի լիարժեք համարել: Նախ, փոխհարաբերությունների բնույթը եղել է ծայրաստիճան միակողմանի և հանգեցրել է Ադրբեջանի այլ ղեկավարներից ԼՂԻՄ-ի կախվածությանը: Երկրորդ, ապա թե այնպես, այսօր ԼՂԻՄ-ի էկոնոմիկայի կողմնորոշումը կատարվում է Հայաստանի և երկրի այլ ղեկավարների ուղղությամբ: Ուստի այսօրվա դրությամբ այդ փաստարկը կորցրել է ուժը:

3. Արցախի պահանջներն ու քաղաքականությունը անհիմն կերպով որակում են որպես հակառակմասնադրական: Իբր գործող սահմանադրությունը հնարավորություն չի տալիս դրանք իրականացնել: Ես հիմա մի կողմ եմ թողնում այն հարցը, թե ինչ պոթենցիալ ամբողջ ժողովրդի շահերին հակասող սահմանադրությունը: Թողնում եմ, որովհետև իրականում պրոբլեմի դրական լուծման կարելի է հասնել նաև գործող սահմանադրության շրջանակներում:

Բանն այն է, որ սահմանադրության ուղե բաժնում, որը կարգավորում է ազգամիջյան հարաբերությունները, խոր հակասություն կա ՌՍՀՄ սահմանադրության 70-րդ և 78-րդ հոդվածների միջև: 70-րդ հոդվածը ծանաչում է իր գոյության կենսական կարևոր հարցերը ինքնուրույն լուծելու լուրջանջնայի ժողովրդի իրավունքը: Այս է Կ. Ի. Լենինի կողմից հիմնափորված՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի ելությունը, որքան էլ որ այսօր պատահալու տեսարանները ջանան բովանդակել անել այն: 78-րդ հոդվածը պարունակում է միութենական հանրապետության սուվերենության կարևոր երաշխիքներ. ստանց նրա համաձայնություն չեն կարող փոփոխվել հանրապետության սահմանները: Ընդհանուր առմամբ, երկու հոդվածներն էլ անհրաժեշտ ու առաջադիմական են: Այստեղից էլ հասնում է, որ ինչպես ԼՂԻՄ ժողովրդական ղեկավարների խորհրդի, ինքնավար մարզի, այնպես էլ Ադր.ՍՍՀ Գերագույն խորհրդի դիքորոշումները, որոնք շարադրված են համապատասխան որոշումների մեջ, սահմանադրորեն հիմնավորված են, չնայած նաև տրամազգորեն հակադիր են: Դրա համար էլ կոնֆլիկտը ձեռք է բերում սահմանադրական ճգնաժամի գծեր: Ինչպե՞ս դուրս գալ նման իրավիճակից: Միակ խելացի ուղին՝ որոշել, թե հոդվածներից ո՞րն է առավել հիմնարար: 70-րդ հոդվածը արտահայտում է ժողովրդի սուվերենությունը, 78-րդ հոդվածը՝ միութենական պետության (տեղալի դեպքում՝ Ադր.ՍՍՀ-ի) սուվերենությունը: Կ. Ի. Լենինի, ինչպես նաև ՌՍՀՄ ազգային քաղաքականության պաշտոնապես հռչակող սկզբունքների տեսակետով, այստեղ պրոբլեմ չկա, ազգերի ինքնորոշման սկզբունքը հանդիսանում է այդ քաղաքականության հիմնադիր անկյունուղի: Դրա համար էլ անվերապահ առաջնությունը պետք է տրվի 70-րդ հոդվածին, որը ավելի լայն պլանով նշանակում է ժողովրդի սուվերենության առաջնություն պետության սուվերենության հանդեպ: Աս է դեմոկրատական զարգացման տրամաբանությունը, պետությունը ժողովրդի համար է, և ոչ թե հակառակը: Այնպես մենք տեսնում ենք հենց տոտալիտար սխառնուրդի տրամաբանություն: Ցավոք, այսօր մենք ունենք բեթմնական ժանախույզ մեզ ծանոթ իրադրություն, խոսքերով ոչ ոք չի հերքել ազգերի ինքնորոշման սկզբունքը որպես հիմնարար: Մենք բոլորս վկա էինք այն բանի, թե ինչպես համագումարում ունեցած իր ելույթում Բ. Կ. Ղազարյանի հետադրորեն առաջադրած հարցն այն մասին, թե այդ սկզբունքը իրոք հիմնարար է հանդիսանում երկրի ղեկավարության համար, պատասխան չգտավ:

Երբ Կ. Ի. Լենինը մշակում և պաշտպանում էր այդ սկզբունքը, նա էլնում էր բնավ էլ ոչ բարի մտադրություններից և բարոյական նորմայից:

Նա իրեն հաշիվ էր տալիս ունի բանում, որ բազմազգ պետության անկոնֆիկտային զարգացումը հնարավոր է միայն ու բացառիկորեն ընտրած ուղիով յուրաքանչյուր ժողովրդի ազատ զարգացման պայմանով, որ ժողովրդի հանդեպ ունեն մի բանություն կարող է հասնել կարծառն, տակտիկական «հաջողությունների», սակայն այդ «հաջողությունները» ստրատեգիական պլանում թվաքայլ հաղթանակներ կդառնան: Այս մասին մտառնալը չափազանց վտանգավոր է, և վերջին մեկուկես մարդա ընթացքում գործերի զարգացումը ելկրում դրա համոզիչ ապացույցն է:

4. Ադրբեջանական գործոն: Ցավոք, մենք բավական մոտիկից ենք ծանոթ դրան: Մեզ, ինչպես նաև ամբողջ երկրին վախեցնում են նրանով, որ Հայաստանի հետ Լոնդոնի Ուղարձարը վերամիավորվելու դեպքում ադրբեջանական բնակչության բողոքը կարող է ծայրահեղ ձևեր ստանալ և «անկանխատեսելի հետևանքների» հասցնել: Նման հարցադրումը կիրառելի չէ մի պետությունում, որը ձգտում է դեմոկրատիայի: «Ադրբեջանական գործոնը» փոքրիշատե օբյեկտիվ հիմք կունենաի այն դեպքում, եթե Արցախի ժողովրդի պահանջը ուղղված լինար ադրբեջանցիների դեմ: Բայց չէ՛ որ սպորտիստի բան չկա: Արցախցիների պահանջները պատմավոր ված են պատմական անսխալություններ, որը տասնամյակների ընթացքում իրականացվել է Բաքվի հակահայկական քաղաքականության կողմից: Կարելի է արդյոք ասել, որ նման ծակատագիր սպասում է ԼՂԻՄ-ում ապրող ադրբեջանցիներին, եթե մարդը միանա Հայաստանին: Ոչ մի դեպքում: Այլապես ինչո՞վ բացատրել Հայաստանում ադրբեջանական բնակչության արագ աճը՝ Ադրբեջանում հայերի թվի ավելի արագ կրճատման ֆոնի վրա: Ես համոզված եմ, որ տասնյակ հազարավոր խաբված ադրբեջանցիներ խաղազինվորների են դարձել ուրիշի խաղում: Չէ՛ որ ի տարբերություն իրենց երեխաների ապագայի, իրենց հողի, իրենց մշակույթի համար պայքարող արցախցիների, նրանք ձգտում են բանություն իրենց ձեռքում պահել այն, ինչը Բաքվի կառավարիչները նպատակապաշարեն ոչնչացրել են 65 տարի: Իսկ ինչ վերաբերվում է վաղուց Արցախում ապրող ադրբեջանցիներին, ապա նրանց իրավունքները պետք է երաշխավորվեն ու պահան վեն: Հավանաբար, համապատասխան պահին անհրաժեշտ կլինի նրանց համար, որպես Արցախի ազգային փոքրամասնության, հատուկ ապահովել այդպիսի հստակ և իրական երաշխիքներ: Ռա մեկ անգամ նա կցուցադրի, որ մեր պահանջները ուղղված են ոչ թե ադրբեջանական ժողովրդի դեմ, այլ Բաքվի հակահայկական քաղաքականության դեմ, և հաղթաթղթերից կարկի քաղաքական սրիկաներին:

5. Ինչ վերաբերում է հինգերորդ փաստարկին, ապա կարիք չկա նրա վրա երկար կանգ առնել: Ռա մեր շարժման երկրորդ խեղաթյուրելու հերթական, բավական անհաջող փորձ է, որին չեն հավատում ոչ նրա ստեղծողները, ոչ էլ պրոպագանդիստները: Չէ՛ որ իսկական մաֆիան գործում է այլ միջոցներով, այն ներթափանցում է պետական իշխանության համակարգի մեջ և իր նպատակներին ծառայեցնում ինչպես կոռուպացված կառուցվածքները, այնպես էլ գաղտնի մեթոդների մի ամբողջ գինաւոց: Իսկ մենք մեր պայքարի նպատակներն ու ուղիները ձևակերպել ենք ազնվորեն

ու բացահայտորեն, և հարկավոր է շատ ցանկանալ, բազմազգի չնկատել, որ այդ պայքարում ըսվում են նաև համադեմոկրատական, հեռուսպեն հակամաֆիոզ խնդիրներ:

6. Ժողովրդավետության պրոբլեմը այս «ծաղկեփնջի» մեջ իրոք կարևորագույնն է: Ավտորիտարիզմին սովոր բարաքական կառուցվածքների համար դժվար էլ մարտել իրենց մենաշնորհի հանդեպ նման ունեցությունը: Աստղից էլ այդքան խիստ չընդունելը: Իր նպատակին հասնելու համար արցախյան շարժումը չի կարող տնցնել համադեմոկրատական էին նական՝ մարդի համակարգի նկատմամբ ժողովրդի վերահսկողություն ասի մասնելու խնդրի կողքով: Այն դեռ հեռու է իր լուծումից, բայց շատ բան ուրված է: Միայն այն պայմաններում, երբ քաղաքական ղեկավարները զգում են ժողովրդի ճնշումը, երբ նրանց իրական հենարանը կազմում են ոչ թե վերևները, այլ աշխատավորները, կարող է զարգանալ իսկական դեմոկրատիան: Հենց նման մոդելին է պատկանում ապագան: Այսպիսով, հենց Արցախում է առաջին անգամ սկսել ձևավորվել այնպիսի քաղաքական համակարգի մոդելը, որով այսօր կողմնորոշվում են երկրի շատ ռեգիոնների դեմոկրատական ուժերը: Ուստի մեր շարժման այդ ուղանցքային ասպեկտին դիմակայելը Էտադիմական է: Ետադիմանացնող և հեռանկարից զուրկ:

Եվ այսպես, մենք ձգտել ենք ցույց տալ, որ գուրաբաղան շարժման նկատմամբ կենտրոնի ընտրած ուղանությունները անգործ գտնվեցին: Կենտրոնի ոչ մի քաղաքական նպատակ չի իրագործվել, ընդհակառակը, չի հաջողվել հանգցնել դարաբաղան շարժումը այն ավելի է ստեղծվել, գիտակցականության և քաղաքական փորձի տուժումով ժողովրդը ավելի գրագետ է դարձել: Իրադրությունը ռեգիոնում բնով չի կարունացել, այլ ավելի է բազմվել, ամուս է գրեթե և իրավախախտումների թիվը: Այսօր մշակվում է սոցալիստիկ քաղաքականություն: Այն պետք է գործնականում հիմնվի ազգերի ինքնորոշման սկզբունքի, ժողովրդին սուպես քաղաքական գերազանց տարեկա ծանաչելու, քաղաքական մոնոպոլիզմի վերացման վրա: Ռա կառուցության և երկրի վերընթաց զարգացման սույն հովման միակ ուղին է:

Այս ամենի դեռևս չկա, որը հասցնում է կառուցության մատուցման սրման: Անցած մեկուկես տասում դարաբաղան պրոբլեմի լուծման ուղղությունը շատ բան է սպասել, չնայած չենք խուսափել նաև սխալներից: Այսօր որակագետ նոր իրավիճակ է ստեղծվել, որը նոր խնդիրներ է դնում մեր առաջ:

Ինձ թվում է, արցախցիներն ազատել են քաղաքական անգրագիտության վերացման դատընթացը: Մեր նպատակը անփոփոխ է, և մենք պետք է պահպանեն լինենք նրան, որ դեպի այն տանող ուղին, հնարավոր է, երկար ու փշոտ կլինի: Ինչպես հասնել դրան, սպաս պարզ է շատերին և պետք է պարզ լինի բոլորին, իրականացնել Հայաստանի հետ փաստական վերամիավորումը, որը անխուսափելի կլորոձնի նրա իրավաբանական ձեվակերպումը: Խոսքը բազմակողմանի տնտեսական, քաղաքական, մշակութային և կազմակերպական ինտեգրացիայի մասին է: Առաջին երկու աս-

պելոնները ազելի սկզբունքային են: Այստեղ այդքան շատ բան է աղվել, կարելի էր ալելին անել, սակայն մենք ինքնետո ենք դրան խանգարել չար, արագված ձևով ձգձգված գործադրումով:

Գործադրող դա ծալահեղ, բայց երբեմն նաև անփոխարինելի քուզու քական գեներ է: Այն էական դեր է խաղացել վերագրա քաղաքական ու պե ստական կառուցվածքների առաջ պրորենը դնելու փուլում: Այդ նպատակը չենք է բերվում: Այսօր միացումն ապահովելու համար ուրիշ միջոցներ ու նկարավորություններ են պետք:

Դա անտեսական ինտեգրացման շարունակումն ու ազարտումն է և Հարաւտունի իշխանության բարձրագույն մարմիններում քաղաքական կա ուսցվածքների, ժողովրդական ներկայացուցչության մեխանիզմի միաժա մանակալ ինտեգրացումը: Պարզ է, որ այստեղ շատ բան կախված է Հա- յաստանի Գերագույն խորհրդից և կոմկուսի Կենտկոմից: Դա փոխգործող թյունն է և ջանքերի միավորումը Մերձբալթիկայի, Վրաստանի, Մոսկվայի, Լենինգրադի, Երպրի այլ ռեգիոնների առաջադիմական շարժումների հետ միասին համադեմոկրատական նպատակներին հասնելու գործում: Դա, վեր ջապես, պրոպագանդիստական աշխատանք է խորհրդային և սորտասահ մանկան հասարակայնությանը մեր շարժման բնույթն ու նպատակները պարզաբանելու ուղղությամբ, հասարակական կարծիքի ձևափրում, ուր պետք է ստանձնեն Հայաստանի և Արցախի ստեղծանքից դուրս ապրող մեր կողմենակիցները:

Նշվում նպատակներին հասնելը սիրովաժայն հնարավոր է, եթե պահ պունվեն անխաճեղ պայմանները: Առաջինը դու բուն տրջախցիների միաս նությունն ու կազմակերպվածությունն է: Այստեղ, ցավոք, ամեն ինչ չէ եսրթ: Այն պայմաններում, երբ մարզը գտնվում է շրջափակման, իսկ ալե լի ճիշտ պաշարման մեջ, անիրատեշտ է ունենալ միասնական, լավ աշխա սող կազմակերպություն, որը միավորել բոլոր տրջախցիներին: Որպեսզի հասնենք այդ ամենին, ինչպես ասում են, պետք չէ հեծանիվ հնարել: Ար ցարում ձևավորվել է կուսակցության ու ժողովրդի հազվադեպ միասնու- թյուն, ուստի ուղ համակարգի ստանցքը պետք է դառնան կառավարման կուսակցական ու խորհրդային ցանցերը: Երկրորդ պայմանը դա լիզերի րակարգությունն է: Եկեք համեստություն չանենք, մենք շատ մարդիկ ու- նենք, որոնք լիզերի դեր են խաղացել շարժման տարբեր փուլերում, երբե մըն դիմելով դիսկի և գոհաբերելով շատ բան: Նրանք անցել են քաղաքա կան դաժան դպրոց, և նրանք փորձը մեր նվաճումն է: Կերջերս մենք ըստ լեցինք Ազգային խորհուրդ: Արցախցիները պետք է բազմակողմանի աջակ ցություն ցույց տան նրան, կատարեն նրա որոշումները: Դա չափազանց կարևոր է ամենից առաջ այն առումով, որ միայն այդպես մենք կարող ենք ցույց տալ ինքնակառավարման, ժողովրդի կողմից ձևաչված քաղաքա- կան կուսուցվածքներ ստեղծելու և հենց դրա շնորհիվ իրական կոնստրուկ տիվ քաղաքականություն վարելու մեր ընդունակությունը: Խորհուրդը կձևակի հեռանկարը, ստրատեգիական և տակտիկական խնդիրները: Արցախցինե լի վստահությունն ու վերահսկողությունը, պետական իշխանության բոլոր

մակարդակներով մեր իղձերը պաշտպանելու Ազգային խորհրդի անդամն րի քաղաքական և իրավաբանական լիազորությունները այն բանի պա- ման են, որ նա կրասես մեր շարժման կրկնօրիվ ղեկավարը:

## Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

### Փիլիսոփայական գիտություններ: Թեկնամու

«Խորհրդային Կարգադ» թիւթ. N 306. 10 սեպտեմբերի, 1990թ.

Հավելված N 80

Բ Ա Յ Ն Ա Ս Ա Կ

### ԽՄՄՎ-ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴՈՒՆ

Մենք՝ համամիութենական գիտահետազոտական երկրորդական ինստիտուտի աշխատակիցներս (Լենինգրադ), ուշի-ուշով հետևում ենք Լեռնային Ղարաբաղի ինքնավար Սարգում, ինչպես նաև Ադրբեջանական ԽՍՀ-ում և Հայկունան ԽՍՀ-ում կատարվող իրադարձություններին՝ սկսած 1988թ. փետրվարի 20-ից, սբ բողոքական դեպուտատների ԼՂԽՄ խոր հորդի սրտահերթ նստաընթացը որոշում ընդունեց միջևորդել ԽՍՀՄ Գե- ուսույն խորհրդի, Ադրբեջանական ԽՍՀ ու Հայկական ԽՍՀ Գեա- գույն խորհուրդների առջև ինքնավար մարզի հալ բնակչության ինքնուրջ ման սահմանադրական իրավունքը հարգելու մասին: Այքի է զարնում այն, որ սահմանադրական իմքի վրա առաջադրված աղ հույցի դեմոկրատա կան լուծման փոխարեն գործի են ցզվել համաշխարհային պրակտիկայում աննախադեպ ուժային ճնշման մեթոդներ, փաստերի եուջան կոնխամտում ված ազավադման ճանապարհով երկրի և համայն աշխարհի հասարակալ նությանը պատահեղեկացներու փորձել, ինչպիսին են հալ ժողովրդի ցեղա սպանությունը Սուճախիթում 1988 թ. փետրվարի 27-29-ը և հետագա իրա դարձությունները, ընդհուպ մինչև վերջին օրերի շարաբորձայ ունեերը, ինչպես օրինակ, խորհրդային միլիցիայի սպաներ Անդրել Միխայլովիչ Տրուգակի և Սերգել Կասիկիչ Գաբալի սպանությունը 1989 թ. սեպտեմբերի 18-ին Ադրբեջանական ԽՍՀ Աղդամի շրջանում:

Դա վնասել և շարունակում է վնաս հասցնել միջուգավան՝ ուսարթ: գում խորհրդային իշխանություն ունեցած հեղինակությունը: Է չենք ասում ուն մասին, որ դու զգալիորեն բարդացնում է ոչ միայն Արցախի և Հայկա կան ԽՍՀ-ի, այլև՝ ամբողջ երկրի էկոնոմիկայի ձգնաժամային իրավիճակը: Իսկ այդ բոլորը միասին հանգեցնում են ժողովուրդների, առ ուննապես հալ ժողովրդի, նիհիլիստական տրանադրություններին ժողովուրդ, որը իրավունք ունի պահանջելու արդարացիորեն լուծել տվյալ հարցը:

Այսպես կոչված «խորցի փոխգիջողական լուծումների» ամեն մի ստր բերակ ոչ այլ ինչ է, քան՝ հալ ժողովրդի շահերի, այսինքն, սրբարության սկզբունքի ոտնահարում: Փոխգիջողություն միակ թուլատրելի ժամանակա վոր տարբերակը մարզի անհապաղ դուրսբերումն է Ադրբեջանական ԽՍՀ

ենթակայությունից և նրա հանձնումը ԽՍՀՄ կենտրոնական իշխանության  
սը, մինչև որ Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անցկացվի մարզի բնակ  
չության մեծամասնության կամքը որոշելու նպատակով:

Հարցի լուծման հետագու պիտեստական ձգձգումը միանգամայն ան-  
թույլատրելի է, քանզի մենք հիմա իրապես գտնվում ենք խայտառակ ազ-  
գամիջում պատերազմի եզրագծին, որի հետևանքները շատ ավելի սարսա  
փնի նկինեն, քան մեզ դա թվում է:

Մենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդին խնդրում ենք անհապաղ լուծել  
ԼՂԻՄ-ի հարցը՝ ԼՂԻՄ-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքների  
հիմուն վրա, այսինքն՝ ելնելով արդարության սկզբունքից, ավելի ճիշտ՝  
ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ՖԵՆՈՒՐԱՑՈՒՄԻ շրջանակներում ազգի  
ինքնուրույնության անվերապահ իրավունքի ճանաչումից:

Բաժնի վարիչ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկ-  
տոր Մ. Գ. ԽԱՐԼԱՍՈՎ, սեկտորի վարիչներ Ռ. Ի. ՍՈՎՈՒՆՈՎ, երկրաբանա-  
հանքաբանական գիտությունների դոկտոր ՅՈՒ. Մ. ՇՈՒԿԱՆՈՎ, գլխավոր  
գիտաշխատողներ, երկրա-հանքաբանական գիտությունների դոկտորներ  
Ի. Ի. ԱԲՐԱՍՈՎԻԷ և Տ. Ն. ՎՈՐԵՆ, պրոֆեսոր Գ. Պ. ՏԱՇԵԵՎ և Ա. Ն.  
ՕԼԵՅՆԻԿՈՎ, Լենինգրադի պետականլսարանի ամբիոնի վարիչ, երկրաբա  
նա-հանքաբանական գիտությունների դոկտոր Ա. Վ. ՊՈՊՈՎ, բաժնի վա  
րիչներ Ն. Ն. ՊՐԵՏՏՈՉԵՆՍԿԻ, երկրաբանա-հանքաբանական գիտու  
թյունների դոկտոր Վ. Վ. ՍՈՒՆՈՎՈՎ, սեկտորի վարիչ, երկրաբանա-հան  
քաբանական գիտությունների դոկտոր ՅՈՒ. Վ. ԲՈՂՈՍՆՈՎ, լաբորատոր  
իւաների վարիչներ Է. Ա. ԲԱՂՈՍՍԱՐՈՎ և Դ. Ս. ՎԱՇԻՎ, առաջատար  
գիտաշխատողներ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր  
ներ Գ. Վ. ՎՈՏԼՅԱՐ, ՅՈՒ. Վ. ԻԼՅԻՆՍԿԻ, Ս. Ի. ՈՐՍԱՆՈՎՍԿԻ, Ն. Վ.  
ԻՎԱՆՈՎ, Վ. Ե. ՊՈՊՈՎ, Զ. Ի. ԳԼԵՋԵՐ, Է. Մ. ԲՈՒԳՐԵՎԱ, Վ. Ի. ՅԱՐ-  
ԿԻՆ, Ն. Գ. ՎԼԱՍՈՎ, ավագ գիտաշխատողներ, երկրաբանա-հանքաբանա  
կան գիտությունների թեկնածուներ Գ. Ս. ՊՐՈՊԵՆՉՈՎԱ, Վ. Վ. ԶԱՍՈ-  
ՐՈՒԵՎ, Ա. Ա. ՍԵՄԵՐԻԿՈՎ, Ե. Վ. ՏՐՈՒՍԵՎԱ, Ա. Զ. ՎՈՆԻԿՈՎ, Վ. Գ.  
ԳԱՆՆԵԼԻՆ, Ի. Վ. ՎԱՍԻԼԵՎ, Դ. Ս. ՍԻԼԵՏԵՅՆ, Դ. Պ. ԱՎՐՈՎ, Գ. Գ.  
ՎՈՉԻՆ, Վ. Դ. ՏԱՐՆՈԳՐԱՍԿԻ, Ս. Ն. ՏԻՈՍԻՐՈՎ, Օ. Վ. ՎՈՎԱԼԵՎՍԿԻ,  
Ա. Վ. ԶՈՒԵՎ, Լ. Գ. ՈՒՉԻՏԵԼՅՈՎԱ, Ա. Ա. ԱՔԱԲԵՎՅԱՆ, գիտաշխատող  
ներ Դ. Պ. ՊՐՈՆԻՆԱ, Ի. Վ. ՎՈՉԻՐՅՈՎԱ, Մ. ՅՈՒ. ԲԵԼՈՎԱ, Վ. Ֆ.  
ՑՎԵՏՎՈՎ, Վ. ՅԱ. ՎՈՒԿՍ, առաջին կարգի ինժեներ Դ. Վ. ԱՆՈՐՈՒՆՍԻ  
ՎԻ, առաջատար ինժեներ Ա. Օ. ՇՄԻՂՏ, երկրաբան Ռ. Ն. ՅԱՐՈՇԵՆՎՈՎ,  
առաջին կարգի լաբորանտ Օ. Ա. ՄԻՎԼՈՒՆՈՎ-ՄԱՎԼԱՅ, համաժողովրդա  
կան երկրաբանական գրադարանի ավագ խմբագիր Ն. ՅԱ. ՏԻՈՍԻՐՈՎԱ,  
ավագ ինժեներ Պ. Տ. ԶԻՄԵԳՈՐՍՎԱՅԱ, մեքենայական բյուրոյի վարիչ  
Դ. Ս. ԽԱՐԿԵՎԻԷ, մեքենագրուիչ Ե. Պ. ՍՈՒՎՈՐՈՎԱ, արտադրական  
բաժնի աշխատակիցներ Վ. Ա. ՎՈՒՋՈՒԲ, Լ. Ս. ԵՐԵՎԱՆԵՎԱ:

«Սարկրային Ղարաբաղ» թերթ, N 247, 20 նոյեմբերի, 1989թ.

Ծանոթանալով այս ժողովածուի բովանդակությանը, պետք է որ ըն-  
թերցողի համար հավանալի լինի, որ իր հիմնական մասի հետ միանալու  
ժողովրդի մյուս մասի բնական ձգտումը ազգամոլության աստիճանի հասց  
նելը անհերթելիություն է, ինչը ներկայումս ուժգնորեն ուռճացվում է Ադրբե  
ջանի բոլոր ատյաններում: Կրկին, արդեն որբորդ անգամ, ի հայտ է գա  
լիս ՌԿ(Բ)Վ 12-րդ համագումարի կողմից մերկացված Կարլ Ռադեյի վար  
կածը Ադրբեջանում «հակակազմ ազգամոլության» առկայության մա  
սին: Բացահայտելով ադրբեջանցի ուկրոնիստների հակալենինյան դրույթի  
եղությունը, կուսակցության 12-րդ համագումարը միևնույն ժամանակ ընդգը  
ծել է, որ այդ հանրապետությունում գոյություն ունի հայ ազգային փոքրա  
մասնության շահերի ոտնահարման անսրող շովինիստական միտում: Ցա  
վոք, այդ վատակար միտումը ժամանակի ընթացքում հիմնավորապես ար  
մատակալել է Ադրբեջանում: «Տիրակալական» հարձակողական շովինիզ  
մը եղել է մտում է որպես Ադրբեջանի ղեկավարների գլխավոր գենըը, ո-  
րոնք էստաֆետը փոխանցում են մեկը մյուսին:

Ամեն ինչ է որվում յուրացանցյուր մարդու համոզելու այն բանում, թե  
Լեռնային Ղարաբաղը միշտ եղել է պատմական ու ժամանակակից Ադրբե  
ջանի անբաժանելի և բաղկացուցիչ մասը: Բայց քանի որ այդ ամենը չի  
կարելի ապացուցել գիտականորեն, ապա հիշատակված տեսակետի ջատա  
գովները դիմում են փաստերի կեղծմանը, բռնադատում են պատմական  
ժշմարտությունը, ամենակոպիտ ու անտակտ սուբյեկտիվիզմ են ցուցաբե  
րում:

Դա ոչ միայն կազմակերպված արշավանք է գիտական պատմագրու  
թյան մեթոդաբանական սկզբունքների դեմ, այլև պատմությունը դեպի անց  
յալը միտված զավթողական ջաղաքականության վերածելու փորձ: Նման  
պատմագրական վարկածի քաղաքական շարժառիթները կատարելապես  
պարզ են. ցանկացում միջոցներով ադրբեջանականացնել ժամանակակից  
Ադրբեջանի պատմական անցյալը, յուրացնել Արցախի, Ուտիքի, Գարդմա  
նի վաղեմի հայկական հողերը՝ իրենց կոթական, հոգևոր, մշակութային  
արժեքներով:

Դեպի մարզի պատմական անցյալը կատարված ոչ մեծ էջակուրսը  
ցույց տվեց, որ մարզն այսօր կանգնած է իր՝ որպես հայկական ինքնու  
վար կազմավորման դեմը կորցնելու եզրին:

Վերջին ամիսներին զանգվածային լրատվության հանդուպետական,  
և հենց միութենական էլ, միջոցները շատ են գրում խորհրդային իշխանու  
թյան տարիներին ԼՂԻՄ-ում տնտեսության «թաղկման» մասին: Ոմանք մեզ  
կկշտամբեն 400 մլն. ուրբլուց հրաժարվելու համար, որ հատկացվել է ԽՄԿԿ  
Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988թ. մարտի 24-ի որոշ  
մամբ: Բայց ոչ ոք չի ցանկանում հասկանալ, որ Լեռնային Ղարաբաղի  
օրինակը (ինչպես և ամբողջ համաշխարհային պրակտիկան) հաստատում

Ե լեհիկյան մուքի ճշտությունն այն մասին, որ ազգային կարգի լուծման գործում «էկոնոմիզմը» պիտանի չէ, որ տնտեսական ու մշակութային ծաղկումը անհնար է առանց ազգայինի ծաղկման, ազգային ազատության:

Ղարաբաղյան շարժման հերթական փուլը, որը սկսվել է և փաստորեն չի դադարել ինքնավար մարզի կազմավորման պահից ի վեր, ժամանակի տեսակետից համընկել է խորհրդային հասարակության հեղափոխական նորացման պրոցեսին, ինչի կապակցությամբ նրա որոշ «կողմնակիցներ» փորձում են տեղի ունեցած իրադարձությունները որակել որպես վերակառուցման բացասական արտահայտություն: Ոչ, վերակառուցումը չէ մեղավոր այն բանում, որ մեր ժողովրդի կամքի դեմոկրատական արտահայտությունը դիմավորվեց սպանություններով ու ջարդերով: Մի՞թե որևէ մեկը կարող էր ենթադրել, թե Ստեփանակերտ քաղաքում տեղի ունեցած խաղաղ ցույցերն ու միտինգները կարող էին հայազգի անձանց զանգվածային բնաջնջման հանգեցել Սումգայիթում և Ադրբեջանի մյուս շրջաններում: Դժվար է հավատալ, թե հաշված օրերի ընթացքում Սումգայիթում միանգամից բարբարոսական ատելության բոցավառվեցին մեկ ուրիշ ազգության ներկայացուցիչների նկատմամբ: Ինչպես որ իրավացիորեն նշել է «Իզվեստիա» թերթը, «ստիպված ենք խոստովանել դառնագինը, վայրենին, անըմբռնելին. մարդկանց սպանել են, ֆիզիկապես ու բարոյապես խեղդել են միայն այն պատճառով, որ նրանք այլազգի են»: («Իզվեստիա», 14 մայիսի 1988թ.): Արմատներն այստեղ շատ խորն են: Եվ դրանք պետք է բացահայտվեն:

Պատմությունը մեկ ժողովրդի երկու մասերի վերամիավորման, հանրապետությունների միջև սահմանների փոփոխման շատ օրինակներ գիտե: Բայց անհուսկանաչի է, թե ինչու մի դեպքում այդպիսի նախադեպերը հաճախում են պատճառական արդարության վերականգնում, իսկ հայ ժողովրդին վերաբերվելու դեպքում համառման լուծումը դառնում է անհնար և չիմունավորված, գնահատվում է որպես ոտնձգություն ինտերնացիոնալիզմի դեմ:

Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ հետ վերամիավորման հարցի որակյալ լուծման դեմ գոնե ինչ-որ չափով լուրջ փաստարկ չգտնելով, Ադրբեջանի ղեկավարությունն մեծ համառությամբ (այն ուր է թե կիրառվեր բարեկատուած նպատակի) վերալուրջում է ԽՍՀՍ սահմանադրության 78-րդ հոդվածը, որի համաձայն միութենական հանրապետության տարածքը չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության: Ըստ որում գիտակցաբար շրջանցվում է ԽՍՀՍ սահմանադրությամբ տրված ազգերի ինքնորոշման իրավունքը, որը հանդիսանում է լենինյան ազգային քաղաքականության հիմնական սկզբունքը, սոցիալիզմի էությունը: Ազգային հարցի վերաբերյալ ԽՍՀՍ Կենտկոմի պլենումը մեկ անգամ ևս հաստատեց կուսակցության հավատարմությունը սոց սկզբունքին:

Մենք հավատում ենք ադրբեջանական ժողովրդի իմաստությանը, հավատում ենք, որ նա իր մեջ ուժ կգտնի գիտակցելու, որ ինքը մուրթված է եղել «տիրակալական» հարմակողական շովինիզմի ջատագույնների կող-

մից, հակաժողովրդական ժողովրդական ձակափոխ ղեկավարների կողմից, որոնց խորթ են եղբայրության ու արդարության զգացմունքները, որ մեր սոցիալիստական պետության մեջ մեկ ժողովուրդը չի կարող և չպետք է վճռի մեկ ուրիշ ժողովրդի բախտը: Միայն իրավահավասարունը և ազգային զգացմունքների փոխադարձ հարգումը կարող են դառնալ մեր ժողովուրդների միջև բարի հարաբերությունների հիմքը:

Մենք իրավունք չունենք թույլ տալու, որպեսզի ճգնաժամը խորանա: Անցել են «Կա ժողովուրդը՝ կա պրոբլեմ, ժողովուրդը չկա՝ պրոբլեմն էլ չկա» կարգախոսի ժամանակները: Կյանքը շարունակվում է: Եվ նույնիսկ ամենատարբեր կարգերը պետք է իրենց լուծումը գտնեն մեր հասարակության դեմոկրատացման ու մարդասիրականացման ընդհանուր կուրսի հունի մեջ:

Վերջ ժողովրդած նյութերը համոզում են, որ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունները պատահական չեն և առավել ևս դրսից չեն սաղորդված: Երկրում տեղի ունեցող հեղափոխական վերակառուցման ու դեմոկրատացման ընթացքը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն ընկալել է որպես մի ժամանակաշրջան, երբ, վերջապես, կարող է ուղղվել նախկին նում՝ հինավուրց Արցախի սահմանադրական կարգավիճակը որոշելիս թույլ տրված սխալը, և երբ կարող են վերացվել ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների խախտումները, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման ոլորտներում ԼՂԻՄ-ի հայ բնակչության իրավունքներին ստանահարմարը:

Տեղի ունեցող իրադարձությունների իսկական արմատներն ու պատճառները գտնվում են հենց Լեռնային Ղարաբաղում ԽՍՀՍ ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների կոպիտ խախտման մեջ, այս մարզի հայ բնակչության իրավունքների ոտնահարման այն հեղձուցիչ մթնոլորտում, որն այստեղ ստեղծվել է Ադրբեջանական ԽՍՀ կազմում մարզի գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում, ինչին նպաստել են անձի պաշտամունքի և լճացման ժամանակաշրջանների բարեբերը: Այն մասին, որ նման մթնոլորտը կատարելապես անտանելի ու անհանդուրժելի է դարձել ԼՂԻՄ-ի հայ բնակչության համար, վկայում են այն միահամառությունը, համառությունն ու համախմբվածությունը, որոնցով Լեռնային Ղարաբաղի հայերը բազմիցս հսրուցել են մարզի սահմանադրական կարգավիճակի վերանայման հարցը: Նույն այդ մասին է վկայում 1988 թվականի փետրվարին սկսված Ղարաբաղի հայերի ելույթների տևականությունը մի այն պիսի պահանջով, որն իր ձևակերպումն է ստացել ոչ միայն ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի նստաշրջանի որոշման մեջ, այլև կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի 1988թ. մարտի 17-ին տեղի ունեցած պլենումի որոշման մեջ, որտեղ ասվում է. «Արտահայտելով ինքնավար մարզի հայ բնակչության իրավունքները, Լեռնային Ղարաբաղի կոմունիստների ձևաչափ մեծամասնության կամքը, խնդրել ԽՍՀՍ Կենտկոմի քաղբյուրոյին՝ վերանայել և դրականորեն լուծել Հայկական ԽՍՀ հետ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վերամիավորման հար-

ցը, որանով իսկ ուղղելով 20-ական թվականների սկզբին Լեռնային Ղարաբաղի տարածքային պատկանելությունը որոշելիս թույլ տրված պատմական սխալը»:

Գնահատելով Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ կատարվող իրադարձությունները, պետք է ելնել այն սկզբունքային դրույթից, որը Մ. Ս. Գորբաչովին արտահայտել է Հարավսլավիա կատարած այցի ժամանակ ժողովուրդների հետ ունեցած գրույցում: «Նրանցից ոչ մեկը, — ասել է ընկեր Գորբաչովը, — հարց չի դրել ոչ խորհրդային իշխանության, ոչ խորհրդային պետությունից դուրս գալու, ոչ սոցիալիզմի մասին: Ոչ»:

Ստիպված ենք նշել, որ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների այդչափ հստակ գնահատականից հետո անգամ երկրի գանգվածային կրա տըվության օրգանները շարունակում են ոչ օբյեկտիվ գիծ վարել այդ հարցում:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի իրադարձությունները հակասոցիալիստական, հակախորհրդային բնույթ չեն կրում, չեն խոչընդոտում մեր հասարակության մեջ տեղի ունեցող հեղափոխական վերակառուցմանն ու դեմոկրատացմանն ընթացքին: Ընդհակառակը, հենց վերակառուցման և դեմոկրատացման կողմից ստեղծված հրապարակայնության, քաղաքական ազատության մթնոլորտն է հնարավոր դարձրել ԼՂԻՄ-ի հազ բնակչության կամքի բացահայտ արտահայտումը: Ռա կատարելապես ակնհայտ է:

Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցած իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սահմանադրական կարգավիճակի մասին հարցը պատկանում է ազգային հարաբերությունների ոլորտի այն առաջնահերթ հարցերի թվին, որոնք պետք է իրենց լուծումն ստանան հեղափոխական վերակառուցման և դեմոկրատացման ոգով. ԽՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության հիմնարար սկզբունքների և համապատասխան: Եվ ինչքան շուտ լուծվի այդ հարցը, այնքան ավելի շուտ կվերականգնվեն բարեկամական հարաբերությունները ադրբեջանական և հայ ժողովուրդների միջև:

Հարկ է, վերջապես, հասկանալ, որ ուժով ու սպառնալիքներով, ջրջափակումով ու պրոֆոկացիոն օրենքներով անհնար է վախեցնել Լեռնային Ղարաբաղի բնակչությանը և նրան ստիպել հրաժարվելու իր ժողովրդի հետ վերամիավորման համար արդարացի պայքարից: Նա, ով հույսը դրած է Ղարաբաղյան պրոբլեմի լուծման այդպիսի տարբերակի վրա, խորապես սխալվում է:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը կատարել է իր պատմական ընտրությունը և այն խաղաղ, դեմոկրատական ձևնապարհով պիտի իրագործվի:

Նախաբան	3
Պատմաքաղաքական տեղեկագիր Ղարաբաղի պրոբլեմի մասին	Լեռնային 4
Հավելված № 1	21
Հավելված № 2	29
Հավելված № 3	31
Հավելված № 4	31
Հավելված № 5	36
Հավելված № 6	37
Հավելված № 7	38
Հավելված № 8	39
Հավելված № 9	43
Հավելված № 10	43
Հավելված № 11	44
Հավելված № 12	45
Հավելված № 13	46
Հավելված № 14	46
Հավելված № 15	48
Հավելված № 16	48
Հավելված № 17	51
Հավելված № 18	53
Հավելված № 19	55
Հավելված № 20	60
Հավելված № 21	65
Հավելված № 22	66
Հավելված № 23	67
Հավելված № 24	67
Հավելված № 25	73
Հավելված № 26	76
Հավելված № 27	77
Հավելված № 28	79
Հավելված № 29	80
Հավելված № 30	87
Հավելված № 31	90
Հավելված № 32	93
Հավելված № 33	95
Հավելված № 34	97

Հավելված № 35	100
Հավելված № 36	102
Հավելված № 37	104
Հավելված № 38	105
Հավելված № 39	106
Հավելված № 40	107
Հավելված № 41	108
Հավելված № 42	111
Հավելված № 43	114
Հավելված № 44	118
Հավելված № 45	119
Հավելված № 46	121
Հավելված № 47	124
Հավելված № 48	125
Հավելված № 49	126
Հավելված № 50	127
Հավելված № 51	135
Հավելված № 52	139
Հավելված № 53	142
Հավելված № 54	146
Հավելված № 55	147
Հավելված № 56	149
Հավելված № 57	150
Հավելված № 58	151
Հավելված № 59	154
Հավելված № 60	163
<b>Վերջաբան</b>	<b>165</b>



# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Վլադիմիր Հայրապետի Թովմասյան  
Վալերի Աբգարի Աթաջանյան  
Յուրի Բախշիի Ներսիսյան

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՐՑ

Ավանդներն ու եռությունը ըստ փաստաթղթերի և փաստերի

## ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЕ ИЗДАНИЕ

Владимир Айрапетович Товмасын  
Валерий Абгарович Атаджанян  
Юрий Бахшиевич Нерсисян

## КАРАБАХСКИЙ ВОПРОС

Источники и сущность в документах и фактах

Խոս. փաստաթղթեր. Խոս. եռությունը փաստաթղթերի և փաստերի:

Издательство «Маштоц» на армянском языке

Նկարիչ՝ Ա. Ս. Ղուկասյան  
Գեղ. և տեխն. խմբ.՝ Վ. Ա. Զաքարյան  
Արբազրիչներ՝ Ն. Ե. Ավանեսյան, Ռ. Հ. Ղազարյան

Հանձնված է շարվածի՝ 23. 10. 1990թ. Ստորագրված է տպագրության՝ 3. 01. 1991թ. փորձատ 60X84 1/16: Թուղթ՝ բերքի: Տառատեսակ՝ «Արմենի»։ Տպագրություն՝ օֆսեր: 10,23 պալմ, տպ. մամ., 9,91 հրատ. մամ.: Տպահանակ՝ 26000 (1-5000): Պատվեր՝ № 259: Գինը՝ 4ս. 80 կոպ.:

«Մաշտոց» հրատարակչություն, 374430, Ստեփանակերտ,  
Ն. Ստեփանյան, 22:

• Издательство «Маштоц», 374430, Степанакерт,  
ул. Н. Степаняна, 22

ԼՂ խմբագրատնտեսական միավորման Վ. Ի. Լենինի անվան  
պոլիգրաֆիկական գործարարություն:  
374430, Ստեփանակերտ, Չկալովի փող. 21:

Полиграфпредприятие им. В. И. Ленина  
НК редакционно-производственного объединения  
374430, Степанакерт, ул. Чкалова, 21

